Լեարդի գիծը երբ իւր աջ անկեան մէջ կեանքի գծին հետ, իսկ ձախ անկեան մէջ բնական գծին հետ միացած և ուղիղ՝ շարունակելի է, կը նշանակէ զօրաւոր կազմուածք մը: Եթէ կարտուած և կեանքի ու բնական գծին միացած չըլլայ, նոյն անձին դժուարամարսութեան ենթակայ եղած ըլլալը և փափուկ ու հիւանդոտ կազմուածք մը կը ցուցնէ: Եթէ կեանքի գծին միացած է, և միացած տեղը խորունկ և ամրող է առանց սակայն բնական գծին դպելու, ցոյց կուտայ խանդարուած առողջութիւն և ստամոքսային տկարութիւններ: Եթէ դէպի կեանքի գիծը ճիւղաւորուած է, գէշ բնաւորութիւն և որկրամոլութեան տրամադրութիւն կը ցուցնէ: Եթէ լեարդի գիծը ուրիշ գիծը կարուած է, պատահական հիւանդութիւններ (մանաւանդ ցուրտէ և տաքէ յառաջ եկասծ) ցոյց կուտայ: Եթէ մէկը բնաւ լեարդի գիծ չունենայ,

ծուլութեան, անտարբերութեան և գէշ մարսողութեան նշան է: Եթէ երկար, խորունկ, լայն, շարունակելի և լաւ գունաւորուած ըլլայ, ցոյց կուտայ ստամոքսի զօրութիւն, ուրախութիւն, յանդգնութիւն և երկար կեանք: Եթէ լեարդի գիծը մինչեւ երեւակի լեռը երկարի՝ մինչեւ ծերութիւն կատարեալ առողջութիւն՝ եթէ դէպի կնանքի գիծը աւելի կարմիր է, սրաի տրափում և ցաւ կը ցուցնէ: Եթէ փակուած և մէջտեղը կարմիր է, ջերմի նշան է: Եթէ լեարդի գիծը լայն, ուղիղ, լաւ գունաւորուած և շարունակելի է, հիւանդութիւններէ և վիշտերէ զերծ՝ երջանիկ կեանքի նշան է:

### ՄՏԱՅԻՆ ԳԻԾ

Եթէ մտային գիծը ուղիղ, ամբողջ, շարունակելի, խորունկ և որոշ է մինչեւ երեւակի լեռան դէմը, և քիչ մ'ալ ծուած դէպի ի ցուցամատը՝ զօրաւոր կազմուածք մը կը ցուցնէ: Եթէ քակուած և անշարունակելի է՝ ընդհակառակը ցոյց կուտայ: Եթէ մտային գիծը ճիւղերէ և շատ մը փոքրիկ գիծերէ կազմուած է, ցոյց կուտայ նրամութիւն և լեզուանիութիւն բայց փափուկ կազմ: Եթէ մտային գիծը՝ դէպի երեւակի լեռը ճիւղաւորեալ է՝ կը նշանակէ լաւ բնաւորութիւն և նրբամտութիւն: Եթէ ճիւղերը դէպի մատները երկարին՝ չարութիւն, խորամանկութիւն, ինչպէս նաև աշխատութիւն և դըժուղութիւն կը ցուցնեն: Երբոր մտաւորական գիծը ամբողջ և շարունակուած է և առանց ճիւղերու, բարկութիւն և անգթութիւն կը ցուցնէ. այս պակասութիւնները աւելի եղած կ'ըլլան երբ նոյն գիծը խորունկ և որոշ է: Եթէ չը շարունակուած ըլլայ, մտային գիծը կը ցուցնէ ամբողջ գործարանայ տկարութիւն: Երբեմն մտաւորական գծին սկիզբը ձուածեւ կլոր ձեւ մը կ'ըլլայ,

այս ձեւը կը ցուցնէ նրբամիտ, կանոնասէր անձ մը : Մտա-  
ւորական գիծ չունեցող անձը՝ չարութեան հակամէտ  
կ'ըլլայ: Երբ նոյն գիծը երկար՝ բարձր և ուղիղ է, լաւ  
բնաւորութեան և զօրաւոր կազմուածքի մը նշան է: Երբ  
մտաւորական գիծը ուղիղ գէպի Արամազդի լեռը կը  
բարձրանայ՝ ցոյց կուտայ հարստութիւն, պատիւ և բարձ-  
րութիւն: Եթէ լիշեալ գիծը առանց ձիւղերու մինչեւ  
ցուցամատին արմատը ելլայ կը ցուցնէ՝ դժբաղդութիւն,  
անդիւթիւն և յանկարծական մահ: Եթէ մտային գծին  
սկիզբը հաստ է, կը ցուցնէ երջանիկ ապագայ մը:

### Ա.ՊԱՐԱՆՉԱՆ

Ապարանջան կը կոչուի այս միջոցը որ Կ'ըլլայ այն  
երկու գծերուն մէջ՝ որոնց մին կը գտնուի ձեռքին սկսած  
տեղը, խիլ միւսը բազուկին ծայրը: Երբ այս միջոցը քիչ  
գիծերով ընդհատուած և լաւ գունաւորուած է, ընտիր  
կաղմուածք մը և լուսնի ու Հրատի մոլորակներուն լաւ  
ազդեցութիւնը կը ցուցնէ: Պէտք է դիտել որ լիշեալ  
ապարանջանը՝ որպէս զի լաւ կազմուածք մը ցոյց տայ,  
պէտք է որ առանց խորչուներու հաւասար հաստու-  
թեամբ և գէպի ձեռքին վարի մասը շատ բարձրացած  
ըլլայ: Եթէ այս գիծը՝ որ ընդհանրապէս ձեռքը բազու-  
կին հետ կը միացնէ, որոշ և խորոշնկ է կը ցուցնէ՝ եր-  
ջանիկ, հսկողարտ և բաղդաւոր մարդ մը: Եթէ օգակա-  
ւոր և փոքրիկ շղթաներ ունի՝ դժուար կեանք մը կը  
ցուցնէ: Եթէ ապարանջանին մէջ փոքրիկ խաչեր կամ  
լաւ եւս է ըսել աստղեր նշամարուին՝ հարուստ ժառան-  
գութիւն և շատ ստացուածք կը ցուցնեն, միայն թէ  
պէտք է դիտել որ եթէ այս խաչերը գէպի կեանքի գի-  
ծին ծայրը գտնուին՝ թէև լիրափ հարուստ ժառանգու-  
թիւն ցոյց կուտան, սակայն կնճռուածքատերու միջոցաւ

ստանալիք: Եթէ ապարանջանէն՝ գծեր վեր ելլեն գէպի  
բնական գիծը, կը նշանակէ վաճառականութեան մէջ  
մեծ յաջողութիւն: Սնխորչոմ և լաւ գունաւորուած ա-  
պարանջանը կը ցուցնէ, լաւ կազմուածք և երկար ու  
երջանիկ կեանք մը:

### ԵՐԵՒԱԿԻ ԿԱՄ ՅՈ.ԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԻԾ

Երեւակի կամ յաջողութեան գիծը այն է որ ապա-  
րանջանէն գէպի միջնամատը կ'երկարի: Սոյն գիծը միշտ  
եռանկիւնէն անդին չերեւար, բայց երբեմն մինչեւ բնա-  
կան գիծը կ'երկարի, երբեմն ալ մինչեւ Երեւակի լեռը  
կամ միջնամատը: Երբ սոյն գիծը սկսած է աջ կողմի  
անկիւնէն՝ ցոյց կուտայ երջանիկ և զաւակներէ բաղդա-  
ւոր անձ մը: Եթէ երեւակի գծին ծայրը շատ մը փոք-  
րիկ գիծեր հաւաքուած են, ցոյց կուտան մեծ յաջողու-  
թիւններէ վերջ դժբաղդութիւններ: Եթէ լիշեալ գիծը  
գէպի բնական գիծը վերջանայ՝ շատ խելացի, առաքի-  
սի և երկարակեաց անձ մը կը ցուցնէ: Եթէ սոյն գիծը  
եւր գոգաւորութեանը մէջ փոքրիկ գիծեր ունի, հիւան-  
գութեան նշան է: Երեւակի գիծը երբ լուսնի լեռնէն  
կ'ելէ, հարստութիւն կը գուշակէ: Եթէ սոյն գիծը աջ  
կողմի անկիւնէն սկսի և ուղղակի Երեւակի լեռը բարձրա-  
նայ, ընտանեկան յաջողութիւններ կը ցուցնէ: Եթէ լիշ-  
եալ գիծը ծուռ ու մոռ է մինչեւ միջնամատը, վիշտեր  
կը ցուցնէ: Եթէ սոյն գիծը ապարանջանէն գէպի ցոյ-  
ցամատը երկարի՝ կը նշանակէ երկար և երջանիկ կեանք  
և պատուաւոր ճամբորդութիւններ:

### Ա.ՐՈՒՍԵԱԿԻ ԿԱՄ ԲԹԱՄԱՏԻ ԼԵՌ

Եթէ Արուսեակի լեռը շատ մը գիծերով ընդհատ-  
ուած է, այն անձը շուայտասէր կ'ըլլայ: Երբ Արուսեակի

ւեռ շատ բարձր է, այն անձը խաղամոլ և անառակ կ'ըւ-  
լայ: Եթէ հոն՝ կեանքի գծին զուգահեռական գիծ մը ըւ-  
լայ, ցոյց կուտայ որ այն անձը վերոցիշեալ մոլութեանց  
շատ հակամէտ է: Եթէ բթամատին արմատին և կեանքի  
գծին մէջ գիծեր գտնուին, ազգականաց հետ վէճ կը  
ցուցնեն: Եթէ դէպի բթամատին արմատը, իրարմէ հա-  
սասար հեռաւորութեամբ չորս գիծեր գտնուին որ յիշ-  
եալ լեռան մէջ կը մտնեն՝ երիտասարդութեան մէջ ժա-  
ռանգութիւններ կը ցուցնեն: Եթէ յիշեալ գիծերը երեք  
կամ աւելի նուազ են, կը նշանակէ որ վերոցիշեալ ժա-  
ռանգութիւնները նուազ շահաւոր պիտի ըլլան: Եթէ  
յիշեալ լեռան վրայ սանդուղ մը գտնուի, կը ցուցնէ  
կանանց պատճառաւ աղքատութիւն: Այս լեռան վրայ  
շատ մը գիծեր՝ անպարկեշտութեան նշան են: Եթէ առանց  
կարգի գիծեր գտնուին՝ այն անձը շատախօս, ստախօս,  
անպարկեշտ և չար կ'ըլլայ: Եթէ Սրուսեակի լեռը խոր-  
շոմեալ է, շատ մը հիւանդութիւններ կը ցուցնէ: Բոլոր  
այն ուղիղ գիծերը որ բթամատին արմատէն կ'սկսին և  
դէպի կեանքի գիծը կ'երկարին՝ կը ցուցնեն կանանց և  
այրերու համար ամուսիններու և բարեկամներու կամ բա-  
րեկամուհիններու թիւը, միենոյն ժամանակ ցոյց կուտան  
ժառանգութիւններ: Եթէ բթամատին արմատը գիծեր ըլ-  
լան որ դէպի կեանքի գիծը կ'երկարին և եթէ այս գի-  
ծերը մազաձեւ ըլլան՝ երկու սեռին մէջ ալ պարկեշտու-  
թեան բացակայութիւն կը ցուցնեն: Եթէ բթամատին ար-  
մատէն գիծեր գալով կեանքի գիծը կարեն, մեծ կամ  
փոքր ճամբրութիւններ կը ցուցնեն:

### ԱՐԱՄԱՉԴԻ ԿԱՄ ՑՈՒՑԱՄԱՍԻ ԼԵՌ

Եթէ գիծ մը՝ ցուցամատէն սկսելով դէպի յիշեալ  
լեռը իջնէ, շատ նպաստաւոր նշան մ'է: Այս լեռան վրայ

աղեղի ձեւով գիծերը, մելամաղձոտութիւն և իւր ար-  
ժանապատուութեամ մէջ վիրաւորուած անձ մը կը ցու-  
ցնեն: Եթէ Սրամազգի լեռը գիծ չունի և բարձր է, կը  
նշանակէ որ այն անձը պետութեան մէջ բարձր գիրք մը  
պիտի ունենայ: Եթէ լեռան վրայ գիծ մը գտնուի, այն  
անձը հաւատարիմ և ծմարտախօս կ'ըլլայ: Եթէ չկըտ-  
րուած շատ մը գիծեր գտնուին, այն անձը շատ հարուստ  
կ'ըլլայ: Եթէ լեռան վրայ սանդուղի ձեւով գիծեր գըտ-  
նուին, կը ցուցնեն որ այն անձը տակաւ առ տակաւ պա-  
տիւներու պիտի արժանանայ: Շատ կտրտուած գիծերը  
հիւանդութիւններու նշաններ են: Եթէ գիծ մը՝ վերի  
անկիւնէն դէպի ցուցամատին արմատը բարձրանայ, կը  
նշանակէ որ այն անձը շատ մեծ շահեր պիտի ընէ: Եթէ  
փոքրիկ գիծեր մտաւորական գիծէն սկսեալ դէպի ի Սրա-  
մաղգի լեռը երկարին, ցոյց կուտան որ այն անձը պատ-  
շոյ շատ ցանկացող, խելացի և բարի վարուց տէր մէկն  
է: Եթէ երկու կամ երեք գիծեր ցուցամատին արմատէն  
պէպի լեռան մէջտեղը իջնեն՝ հարստութեան, երջան-  
կութեան նշան են, այն անձը մոլութիւնները կ'ատէ և  
առաքինութիւնը կը սիրէ:

### ԵՐԵՒԱԿԻ ԿԱՄ ՄԻԶՆԱՄԱՍԻ ԼԵՌ

Եթէ երեւակի լեռը խոսոր և ճիւղաւորեալ գիծե-  
րով կտրուած է, այն անձը ապերջանիկ և իւր բոլոր  
գործոցը մէջ անյաշող կ'ըլլայ: Եթէ այս գիծերը երկայն-  
քին են, հարստութեան նշան են: Պէտք է նկատի առ-  
քին որ այս լեռը միմիայն մէկ գծով մը կտրուած կ'ըլլայ,  
և կթէ շատ մը գիծեր ըլլան՝ շատ գժուարութիւններ և  
հարստութիւն ունենալու համար շատ նեղութիւններ կը  
ցուցնեն: Եթէ երեւակի լեռան վրայ ուեէ գիծ չգտնուի՝  
կը ցուցնէ քաղցր կեանք մը, և պարզ ու աշխատասէր

մարդ մը որ բնաւ հոգ չունի : Եթէ միջնամատին արմաւ մատին մօտ կարձ և փափուկ գիծեր գտնուին՝ ծոյլ, տխուր և ուեէ ձեռնարկի մէջ չը յաջողող մարդ մը կը ներկայացնեն : Եթէ նոյն լեռը միայն մէկ գիծով կտրուած է՝ երջանկութեան և հարսաութեան նշան է, իսկ եթէ շատ գիծերով բաժնուած է նոյն ազդեցութիւնը չունենար : Եթէ լեռան վրայի այս գիծերը հաստ և ուղիղ են՝ քաղցր և հանդարտ կեանք մը կը ցուցնեն, բայց եթէ փափուկ և քակուած են՝ տիրութիւն կը ցուցնեն : Եթէ երեւակի լեռան վրայ շատ մը գիծեր կան որ շատ կը տրուած են, և դէպի ձեռքին վարի կողմը կ'երկարին, բարկացոտ բնաւորութիւն մը ցոյց կուտան : Եթէ լեռան վրայ անդուղի ձեւ գիծեր գտնուին՝ երկարատեւ ջերմ, երիկամանց ցաւ, բանտարկութիւն և թշուառութիւն կը ցուցնեն : Եթէ շատ մը գիծեր կուտակուած և միացած ըլլան լեռան վրայ՝ թշնամութիւն և հալածանք կը ցուցնեն :

### ԱՐԵԳԱԿԻ ԿԱՄ ՄԱՏՆԵՄԱՏԻ ԼԵՌ

Որպէս զի այս լեռը՝ լաւ, ազնիւ և ընտիր յատկութիւններով օժտեալ անձ մը ցոյց տայ, պէտք է որ միայն երկայնքին գիծեր ունենայ, և անոնք ալ առ առաւելն 2—3 հատ ըլլան : Եթէ այս լեռը շատ մը գիծերէ բաղկացած ըլլայ՝ ասիկայ ցոյց կուտայ թիթեւ, ունայնամիտ և քիչ սիրելի անձ մը : Եթէ յիշեալ լեռը երկու ուղիղ և խորոշնկ գիծերով կտրուած է՝ հարսաութիւն կը ցուցնէ : Եթէ շատ մը ուղիղ և քակուած գիծեր երկարած ըլլան դէպի մատնեմատը՝ ուղամիտ, արդարասէր անձ մը կը ցուցնեն, որ ակայն իւր բարեկամներուն երեսէն պիտի դժբաղդ ըլլայ : Եթէ լեռան վրայ՝ եռանկին մը ձեւացնող երկու գիծեր գտնուին մատին արմատին մօտ, բարձր

տեղէ մը անկում կը նշանակեն : Եթէ ամսդուղի նման գծեր տեսնուին այս լեռան վրայ, կը նշանակէ որ այն անձը պիտի կարողանայ տակաւ առ տակաւ բարձրանալ և պատիւներու արժանանալ : Եթէ շատ մը խառն, անկարգ գիծեր գտնուին այս լեռան վրայ, մեծամիտ և թեթեւ բնաւորութեամբ անձ մը ցոյց կուտան : Եթէ միւնոյն լեռնէն գիծ մը երկարելով մատնեմատին արմատը կտրէ, գողութենէ կորուստ կը նշանակէ : Երբոր խառն գիծեր արմատին կը դպին, կը նշանակէ որ շատ թշնամի պիտի ունենայ : Եթէ քանի մը պկտիկ կարծ գիծեր մատնեմատին գէպի ձեռքին այն անձը հաւատարկութիւն կ'ըլլայ : Եթէ մատնեմատին արտարիմ և առատաձեռն կ'ըլլայ : Եթէ յուր կամատին մէջ փոս մը գտնուի, ակարութիւն և յոսի ընթացք կը նշանակէ : Եթէ Սրեգակին լեռանը վրայ աստղ մը գտնուի՝ բաղդ, պատիւ և շատ բարեկամներ ունենալու նշան է :




### ՓԱՋԼԱԾՈՒԻ ԿԱՄ ՓՈՅԲՐԻԿ ՄԱՏԻ ԼԵՌ

Եթէ Փայլածուի լեռը փոքրիկ գիծերով լեցուն է, պէտք է զգուշանալ այն անձէն որ չարամիտ, խարդախ և խորամանկ կ'ըլլայ : Եթէ այս լեռան վրայ քակուած և փափուկ գիծ մը գտնուի, այն անձը ագան և ուրիշն վնասին անտարեր կ'ըլլայ : Եթէ նոյն լեռան վրայ փոքրիկ գիծեր գտնուին որ դէպի արմատը չեն երկարիր, այն անձը բացուկը վերք կ'ունենայ : Եթէ լեռան վրայ շատ ուղիղ և կանոնաւոր գիծեր գտնուին, այն անձը ճարպիկ և բոլոր ձեռնարկութեանց մէջ փորձաւու մէկը կ'ըլլայ : Թէ ո՞՛թէ Փայլածուի և թէ մատնեմատին վրայ ո՞րո՞չ զեղեցիկ գիծեր ըլլան, կեղծաւոր բնաւորութիւն կը ցուցնեն : Եթէ լեռան վրայ քանի մը խոշոր և կարծ գիծեր գտնուին՝ այն անձը շատախօս կ'ըլլայ : Եթէ լե-

ուան վրայ կամ արմատը քիչ որոշ գիծեր գտնուին, այն անձը ստախօս, խաբերայ և ամէն չարիքի կարող անձ մը կ'ըլլայ: Եթէ լեռան վրայ ծուռ և նուազ յայտնի գիծեր գտնուին, այն անձը անհաւատարիմ և գէշ կ'ըլլայ: Եթէ շատ գիծեր գտնուին նոյն լեռան վրայ՝ այն անձը չար, խորամանկ և խարդախ կ'ըլլայ: Եթէ խոշոր և յայտնի գիծեր գտնուին՝ որ ուրիշ հաստ գիծերով կը տրուած են, այն անձը ցանկասէր կ'ըլլայ: Եթէ հաստ և կարճ գիծ մը գտնուի որ մատնեմատին արմատէն դէպի երեւակի լեռը կ'երկարի, այն մարդը գողնալու և մարդ սպաննելու յարմարութիւն կ'ունենայ: Եթէ Փայլածուի լեռան վրայ գեղեցիկ աստղ մը գտնուի, կը նշանակէ որ այն անձը կրնայ օտար երկրի մէջ պատիւներու և բարձր աստիճաններու արժանանալ:

•••••

## ՄՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ (PHRÉNOLOGIE)



Մտաբանութիւնը այն գիտութիւնն է՝ որով կը հասկցուի անձի մը մտաւորական կարողութիւնները և բարոյական յատկութիւնները՝ զանկին զանազան մասերուն մեծութեամբ և ամբողջ գանկին ընդհանուր կազմութեամբը: Այս նպատակին համար գլուխը բաժնուած է 35 հատուածներու: Այս հատուածներուն իւրաքանչիւրը կը ցուցնէ համաշափ զօրութիւն: Հետեւեալներն են այն 35 կարողութիւնները ըստ Բրօֆ. Կալի (ծնած 1757ին մեռած 1828ին):

1<sup>0</sup> Սիրելութիւն, սէր դէպի հակառակ սեռը: 2<sup>0</sup> Որդեսիրութիւն: 3<sup>0</sup> Կեդրոնականութիւն: 3ա. Տնասիրութիւն: 4<sup>0</sup> Սիրոյ տեւողականութիւն: 5<sup>0</sup> Ռազմասիրութիւն: 6<sup>0</sup> Ապականութիւն: 6ա. Կերակրասիրութիւն:

7<sup>0</sup> Խորհրդապահութիւն, եթէ զօրաւոր է կը ցուցնէ խորամանկութիւն, միջակը՝ խոհեմութիւն, իսկ տկարը՝ նրբամտութեան պակասութիւն, 8<sup>0</sup> Ստացականութիւն՝ 9<sup>0</sup> Շինուածափրութիւն։ 10<sup>0</sup> Ցուցամոլութիւն։ 11<sup>0</sup> Հաւանութեան սէր։ 12<sup>0</sup> Զգուշաւորութիւն։ 13<sup>0</sup> Մարդամիրութիւն։ 14<sup>0</sup> Յարգանք։ 15<sup>0</sup> Հաստատամտութիւն։ 16<sup>0</sup> Խղճահարութիւն։ 17<sup>0</sup> Յոյս, եթէ փոքր ըլլայ կը ցուցնէ սրտաբեկում։ 18<sup>0</sup> Զարմացում, զարմանալի բաներու սէր։ 19<sup>0</sup> Գաղափարականութիւն։ 19ա. (Անորոշ)։ 20<sup>0</sup> Հանձար։ 21<sup>0</sup> Նմանութիւն։ 22<sup>0</sup> Անհաստականութիւն, ուեէ առարկայի մասնաւոր կամ անհաստական յատկութեան զգացումը։ 23<sup>0</sup> Գեւ։ 24<sup>0</sup> Մեծութիւն, չափանդաչափութեան՝ մեծութեան և հեռաւորութեան ըմբըընում։ 25<sup>0</sup> Ծանրութիւն, ծանրութիւնը դատելու կարողութիւն։ 26<sup>0</sup> Գունաւորում, գոյնի գնահատում։ 28<sup>0</sup> Հաշուական կարողութիւն։ 29<sup>0</sup> Կարգ, կանոնաւորութիւն։ 30<sup>0</sup> Պատահականութիւն, գէպքերու յիշում, գործի կարողութիւն։ 31<sup>0</sup> Ժամանակ։ 32<sup>0</sup> Երաժշտասիրութիւն։ 33<sup>0</sup> Լեզու, գաղափարի արտայայտութեան կարողութիւն։ 34<sup>0</sup> Բաղզատութիւն, բաղդատելու կարողութիւն։ 35<sup>0</sup> Պատճառականութիւն, ազդեցութենէն պատճառը հետեւցնելու կարողութիւն։

— օգոստ —

## ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ (APICULTURE)

Եթէ պարտէզ մը ունիք, շատ գիւրութեամբ կրնաքմէկ անկիւնը մեղուի գիթակ մը հաստատել, որ՝ բացի գեղեցիկ զրոսանք մը հայթալթելէ, մաքուր մեղը կուտայ ձեզ, գիթակին մեծութեանը համեմատութեամբ։ Գիթակի տեսակներու մէջ ամէնէն աւելի յանձնարարեւիներն են Լայանս (Layence)ի տեսակը քսան շրջանակով կամ Տատանի (Dadant)ի տեսակը՝ որք գիւրատար են։

Մինչեւ Ապրիլի 15ը պէտք է գիթակը առնուած ըլլայ։ Փիթակը այնպէս պէտք է ըլլայ որ կարենաք մեռցիչ մը յարմարցնել վրան, որ փայտէ կամ մետաղէ շինուած տեսակ մը ընդունարան է ուեէ ձեւով, որ գիթակին շրջանակներուն վրայ կը դնեն և ուր՝ մեղուները պիտի երթան շաքարի օչարակը խմելու, երբ իրենք բաւականաչափ մեղը չունին մնանելու համար։ Կատարեալ գիթակ մը իւր բոլոր մեղուներովը գրեթէ 2 ոսկիի չափ կ'արժէ, այս գնոյն վրայ պէտք է աւելցնել հետեւեալներուն գնման ծախքը։ Քող մը, փքոցաւոր ծիոց մը, վրձին մը, դանակ մը։

## ՓԵԹԱԿԸ ՑԵՂԸ ԴՆԵԼԸ

Մեղուներով լեցուն գիթակը ստացած էք ձեր տղարկիչէն, որ պէտք եղած զգուշութիւնները ըրած է մեղուներուն տեղափոխութեանը համար, հաստատելով շրջանակները և ափսէն՝ և լեցուն գուռներուն տեղ վանդակապատ դուռներ դնելով։ վանդակապատ դուռները, մեղուները արգիլելով հանդերձ, դուրսի օղը առնելու կը նպաստեն։ Այժմ գիթակը կը տանիք իւր յենարանին վրայ հաստատուած՝ պարտէզին այն անկիւնը որ ընտրած էք, շրջանակները բռնող փայտի շերտերու գամերը հա-

Նեցէք և մեղոները ազատ ձգեցէք : Փեթակի մը համար լաւագոյն յենարանն է չորս ոտքով պատուանդան մը որ գեանէն 40 հարիւրորդամեթք բարձր ըլլայ : Որքան որ կարելի է ջանացէք որ փեթակին դուռը արեւելեան կողմը ըլլայ, բայց միենոյն ժամանակ կէս օրուան արեգակին ջերմութենէն պաշտպանելու է ծառի կամ պատի մը չուքովը : Փեթակը պէտք է պահպանել հարաւի դէմ եղած ճառագայթումէն : Պտղատու ծառոց մեղրանիւթէն օգտուելու համար գարնան շատ մեղուներու պէտք ունիք : Ապրիլի սկիզբն, ձեր մեղոները բաժնեցէք իրենց սնուցիչն մէջ և մէկ անգամէն զբեթէ երկու քիլոլրամ շաքարի օշարակ տուէք, որ կարելի է պատրաստել երկու մաս բիւրեղացեալ շաքար 1 լիար ջուրին մէջ մեղմ կրակի վրայ եփելով, ինչ որ շատ դիւրին է : Գարնանային այս սննդեան նպատակն է փութացնել թագուհոյն ածքը, ասկից զատ, եթէ մեղուներու պաշարը նուազ է, շատ օգտակար կ'ըլլայ իրենց համար և գոյութիւնին կ'ապահովուի :

ԱՆՈՒՇԱՀՈՅ ՄԵՂՐ ՈՒՆԵՆՈԼՈՒ ՀԱՄԱՐ

Կուղէքը ընտիր և անուշահոտ մեղր մը : Զեր պարտէզին եղերքները ցանեցէք ամէնէն աւելի մնդրաբեր գարնանային ծաղիկներ, որպէս են . շահպրակ (շէնպօյ), թաւրնջակ (չուգա չիչէյի) յափրուկ (մուհապպէթ չիչէյի) և լն . քիչ մ'ալ իշառուոյտ (էվլլա օթթը) ցանեցէք մէկ անկիւնը, միեւնոյն ժամանակ աւելցուցէք ձեր պալատու ծառերը, հաղարջենիները (փրէնկ իւղիւմի աղաճը), ժօխինիները (զմառւլա աղաճը), ասոնք՝ մեզուներուն մեղր և բեղմաւորիչ փոշի կուտան, միեւնոյն ժամանակ ծաղկաքաղիկներու՝ ծաղկանց վրայ այս աշխատութիւնը արդասաւորութիւննին կը դիւրացնէ, որով կրկնակի օ-

գուտ մը եղած կ'ըլլայ, վերջապէս ձեր մելրին սքանչելի  
բոյր մը և համ մը տալու համար վայրի մրկենի (սալքըմ)  
մ'ալ տնկեցէք, որուն գեղեցիկ ողկուղաձև ծաղիկները  
բացի իրենց անոյշ հոտէն, զարդ մ'ալ կը կազմեն, Որ-  
քան շատ հոտաւէտ ծաղիկներ ունենաք ձեր պարտէզին  
մէջ, այնքան անուշահոտ և ընտիր կ'ըլլայ ձեր ունենալիք  
մելրը, և արդէն այդ բանին մէջ կը կայանայ լաւ մել-  
ուարոյծի մը գաղտնիքը :

ՄԵԴՐԸ ՀԱԻԱԹԵԼՈՒ ՀՈՄԱՐ

Երբ թմբինսերը (օխլամուր) կ'սկին ծաղկաթափ ըլ-  
լալ, հետեւեալ կերպով կրնաք ձեր առաջին մեղրաքալը  
կատարել: Արեգակ եղած գեղեցիկ օր մը քաջութիւն  
ունեցէք և ընաւ մի վախնաք ձեր մեղուներէն:  
Քողը գլուխնիդ անցուցէք, ծխոցը պէտք է մխայ, այս  
ծխոցը տեսակ մը փքոց է, որ կը ծառայէ գործիքին մէջ  
դրուած կրակը արծարծելու, այս գործիքին վրայ դրուած  
կ'ըլլայ խոշոր քուրչ մը որ կամաց կամաց կը մխայ: Քուրչը  
կարելի է քիչ մը աւքուով թրջել, Շուլիք՝ ծխանէն կ'ելլէ  
առաւել կամ նուազ թանձր՝ փուքին արուած զարկին  
համեմատ: Մեքենական փքոցները որ զսպանակով մը  
կը գործեն՝ քիչ մը դիւրաբեկ են: Մուխը պէտք է չա-  
փաւոր կերպով մեղուներուն վրայ տալ, որպէս զի չա-  
փազանց չը կատղին և անհանդիստ ըլլան: Մուխը պէտք  
է միմիայն մեղուները թմբեցնելու ծառայէ, որպէս զի  
չվեստուին: Երբ մեղուները ամենքին մէկ կ'սկսին թե-  
ւերնին զարնել, ինչ որ սկսնակ մը կրնայ հասկնալ, պէտք  
է ծխումը դադրեցնել, ծխումը վերստին սկսելու է այն  
ատեն միայն՝ մեղուները երբ շրջանակին բոլորտիքը  
կ'սկսին ցատկել և կ'սպառնան: Վրձինը և դանակը ա-  
ռէք և մօտեցէք, քիչ մը մուխ տուէք փեթակին դրա-

Նը, վեր վերցուցէք կափարիչը և բարձը որ փեթակին վերի մասը կը կազմեն, և որոնց նպատակն է տաքութիւնը փեթակին մէջ տարածել: Երբ այս ըրած էք, թեթեւ կերպով ծուխը տալով, տախտակներէն մէկը բացէք և քննեցէք պաշարնիդ, որ ընդհանրապէս իւրաքանչիւր լաւ լեցուած շրջանակի համար Յօհայ կ'ըլլայ այսպէս՝ արագաբար շարունակեցէք ձեր քննութիւնը, որով կը գիտնաք եղած մեղրին քանակութիւնը: 12—15 օխայ փեթակին մէջ պիտի ձգէք, մնացեալը ձերն է: Եթէ առանց արտահանիչի կ'ու զէք մեղր առնել, դանակովը խորիսին երեսներուն միոյն կնիքները բացէք և ձգեցէք որ պտուկի մը մէջ կաթէ մեղրը, տաք տեղի մը մէջ հետեւեալ օրը միւնոյն բանը կ'ընէք միւս երեսին համոր: Պարապ շրջանակները փեթակը դրէք նորէն, մեղուները զանոնք կը մաքրեն: Եթէ չափէն աւելի մեղր առած էք, իսկոյն պէտք է դարմանել ըրածնիդ ծնուցիչն մէջ շաքարի օշարակ լեցնելով:

### ՔԱՆԻ ՄՀ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Մեղուները յաջող կերպով վարելու համար քանի մը գործնական խրատներ անհրաժեշտ են մեղուաբոյցերու համար: Սկանակները պէտք է գիտնան որ՝ հակառակ շատ մը գիւղացիներու կարծեաց կամ հաւատքին, մեղուն՝ իւր տէրը չը ճանչնար: Ուստի իրենց հետ պէտք է միշտ զգուշութեամբ և ապահով եղանակով վարուիլ, առանց բուռն ընթացքի՝ պէտք է միշտ չափաւորել շարժումները և արագ շարժումներ բնաւ չընել: Եթէ վրանիդ անուշ հոտ կայ՝ մեղուներուն բնաւ մի մօտենաք. գարձեալ՝ պէտք չէ մօտենալ մեղուներուն եթէ քրտնած էք: Եթէ աիկինները վրանին հոտ քսած են պէտք է աղդաբարել իրենց որ փեթակին չը մօտենան: Կենդանի-


ները՝ մահաւանդ որսի շուները պէտք է փեթակին հեռու պահել: Շատ անգամ մեղուները այցելուներուն մազերուն մէջ կը խուժեն և սոսկալի կերպով կ'սկսին խայթել, պատճառը գլխուն քսուած գեղաղեղերը, քացախը կամ գլխու հոտն է: Երբ օդը փոթորկալից է, կարելի չէ մեղուներուն մերձենալ: Դարձեալ՝ պէտք չէ զիրենք անհանգիստ ընել անձրեւի ժամանակ և վերջապէս իրրե վերջին յանձնարարութիւն՝ սկսնակ մը պէտք չէ առանց դէմքը ծածկած ըլլալու փեթակին մօտենայ: Մեղուներուն աղդած վախը չափաղանցուած է, անսնք ամէն բանէ առաջ աշխատաւորներ են, որով չեն ուզեր որ մէկը իրենց աշխատութիւնը խանգարէ և այս պատճառու գիտեն զիրենք անհանգիստ ընողներուն արժանաւոր պատիժը տալ:

—օշակու—

### ՃԵՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Չին	12,000,000	քիլոկրամ, արժէք	300	միլիոն ֆր.
Ճաբոն	8,000,000	»	250	»
Իսալիա	3,000,000	»	130	»
Հնդկաստան	800,000	»	18	»
Գաղիա	650,000	»	25	»
Թիւրքիաստան	550,000	»	20	»
Թուրքիա	1,000,000	»	35	»
Կովկաս	2,000,000	»	10	»
Պարսկաստան	200,000	»	8	»
Ցունաստան	350,000	»	13	»

## ԽԵՂԴՈՒԹՅՈՒՆ, ՀԵՂՁԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ




Ամէն տղայ և աղջիկ պէտք է լողալ սորվի և միւնոյն ժամանակ խեղդուելու վրայ եղող մէկը աղատեւ լու միջոցները :

Իեղդուսովի և կազէ հեղձաման եղողի դարմանը միւս-  
նոյնն է, պէտք է, առաջին՝ չնչառութիւնը վերահաս-  
տատել, երկրորդ՝ տաքութեան և արեան շրջանին  
աստիճանը բարձրացնել:

Անմիջապես պէտք է հիւանդը կոնսալիթ վրայ պառ-  
կեցնել, բարձ մը կամ կլորուած վերարկու մը ուսուկընե-  
րուն (+է-ըէ+ ) տակը դնելով՝ և գլուխը քիչ մը դէպի  
ետեւ ծուելով՝ պէտք է դէմքը դէպի մէկ կողմ գարձնել  
և բերնէն զուրս հանել հօն գտնուած աւազը կամ  
տիղմը կամ աղի ջուրը, վիզին և կուրծքին վրայ գըտ-  
նուած բոլոր հագուստները քակել, յետոյ պէտք է ջա-  
նալ չնչառութիւնը տեղը բերել հետեւեալ կերպով .

Հիւանդին գլխուն կողմը կենալով, պէտք է թեւե-

բուն արմուկներէն բռնել և դէպի վեր քաշել թեւերը կամաց կամաց գլխէն վեր (տես պատկեր 1), երկու երկ-վայրկեանի չափ այդ դիրքին մէջ պէտք է պահել բա-զուկները, յետոյ պէտք է բազուկները վար քաշել և զօրաւոր մը սեղմել կուրծքին կողերը (տես պատկեր 2), այս շարժումը կամաց կամաց շարունակելու է գրիթէ մէկ վայրկեանի մէջ 15 անգամ մինչեւ որ հիւանդը սկսի չունչ առնել և կամ բժիշկը գալով հաստատէ թէ մե-ռած է, եթէ երկրորդ մը ներկայ է, կրնայ օգնել ձեռ-



Քին, մէկը կուրծքին տակը գնելով և թեթեւ մը ձնելով՝  
բաղուկներուն վար իջած ժամանակ, դարձեալ սրունք-  
ները վեր հանելով և շփելով։ Հիւանդը շնչել սկսելուն  
պէս պէտք է այլ եւս դադրեցնել՝ և սկսիլ տաքութիւնը  
և արեան շրջանը զօրացնելու դարմանները, եթէ կարե-  
սելի է 5 վայրկեանի համար տաք լոգանք մը տալու է,  
հիւանդը փաթթելով տաք չոր սաւաններու մէջ անդամ-  
ները շփելու է, և դէպի վեր առած ոտքին տակ շիշեր  
կամ աղիւաններ գնելով, դարձեալ՝ ստամոքսին, խոռոչին

և անութներուն (+օլիուն+) տակը : Երբոր կլլելու կարող է քիչ մը տաք գիսի և ջուր կամ օղի և թէյ կամ սուրծ տալու է , և հիւանդը անկողինի մէջ պառկեցնելու և ձգելու է որ քնանայ , եթէ չնչելու նեղութիւն ունի՝ առ նանուխի խիւս (լովա) մը պէտք է դնել կուրծքին վրայ , և կանակը՝ ուսերէն վար :

—•••••—

### ԷՍԲԷՐԱՆԹՕԽՈՍՔ

Սշխարհիս հինգ մասերուն մէջ Էսբէրանթօ խօսող ներուն թիւը այսօր 500,000ը կ'անցնի , ճարոնի մէջ իսկ 4000 հոգիէ աւելի կը հաշուի Էսբէրանթօ խօսողներուն թիւը՝ որոնց գլուխը կը գտնուի արտօաքին գործոց նախարար Կոմս Հայաշի : Էսբէրանթօն տարածելու համար 1100 ընկերութիւններ կան , որոց 160ը Գաղիոյ մէջ են : Ամէն մարդ գիտէ թէ ինչ մնծ գիւրութեամբ կարելի է Էսբէրանթօն սովորի , այս լեզուաւ մինչեւ ցարդ 2000է աւելի հատորներ հրատարակուած են Եւրոպիոյ մէջ և 80 լրագիր կը հրատարակուին սոյն լեզուաւ : Պէտքայի պատերազմական նախարարը Էսբէրանթօն պարտաւորին ըրաւ երկրին զինուորական վարժարաններուն մէջ : Եւրոպական բանակներէն շատերը սկսած են ուսումնասիրել այս լեզուն , վերջապէս՝ վերջին թղթատարական համաժողովը ընդունեց Էսբէրանթօն իբրեւ տիեզերական պայմանագրական լեզու :

### ՀՐԱՏ ՄՈԼՈՐԱԿԸ

Միթէ կարե՞լի է որ մեզ նմանող աշխարհ մը ջուրի պակասութէնէ նեղուի : Այս հարցման պատասխանելու համար , պէտք է ուսումնասիրել այն բաները որք տեղի կունենան մերինէն աւելի հին երկրի մը վրայ , և որ բաւական մօտ ըլլալով կարելի եղած է մեզ դիտել մանրամասնորէն և լուսանկարել իսկ : Կուղենք խօսիլ Հրատ մոլորակին վրայ , որ երբեմն երկրէս 14 միլիոն փարսախ հեռաւորութեամբ կանցնի , ինչ որ պիտի պատահի այս տարի : Երկրիս նման Հրատն ալ կազմուած է միենոյն արեգակնային միգապատ աստղէն , և անոր նման այս մուրակն ալ ունի ջուրի չոգի պարունակող մթնոլորտ մը : Իւր թաւալման առանցքը , մերինին նման հակած է արեգակին բոլորտիքը ըրած շրջանին գծին վրայ որով՝ Հրատ միրինին նման եղանակներ ունի . թէկ անսնք կրկին անգամ երկար են : Հրատը երկրիս նման կազմուած՝ և միենոյն ծագումը ունենալով , պէտք է իր բարեշրջման մէջ միենոյն փոփոխութիւններէն անցնէր , որոնցմէ անցած է երկրիս : Ուրեմն Հրատ երկրիս քոյրն է , թէկ մեզմէ վերջը ծնած է , աւելի շուտ պաղած է , որուն պատճառը իւր փոքր ըլլալն է : Ուստի՝ շատ այլանդակ չի պիտի ըլլար խորհիլ թէ Հրատ իւր ներկայ վիճակին մէջ մեզ ցոյց կուտայ ինչ որ պիտի ըլլայ քանի մը հազար դարերու շրջանին մէջ : Հրատի ուսումնասիրութիւնը մեզ կը մտակարարէ լուրջ ծանօթութիւններ մեր վտանգեալ մոլորակին հաւանական ապագային նկատմամբ :

### ՀՐԱՏ ԿԸ ՆԵԴՐԻՒ ԶՈՒՐԻ ՊԱԿԱՍՈՒԹԵՆՔ

Հրատը դիտած ժամանակին մակերեւոյթին վրայ մառախուղ պիտի տեսնենք , երկրիս նման ամպեր չունի

և հաւանական է որ յաճախ անձրեւ չունենայ, հողը չոր պէտք է եղած ըլլայ: Զուրը կը գտնուի բեւեռները շըր ջապատղ երկու ճնշուած տեղերուն մէջ, այս բեւեռային ծովերուն իւրաքանչիւրը ձմեռը ամբողջովին սառոյցի ահագին կոյտ մը կը ձեւացնէ: Ուրեմն՝ ապահովաբար մոլորակին շարունակական չորնալովը, միջոց մը կեանքը այնպէս եղած է որ հասարակածին կողմերու բնակիչները ստիպուած ըլլալու են բեւեռներու երկու ծովերուն եղերքները վերջնականապէս հաստատուիլ: Հրատի բնակիչները միժիայն այն տեղերուն մէջ կրնային իրենց գոյութեանը համար հարկաւոր ջուրը գտնել:

### ՀՐԱՏԻ ԿԸ ՄԱՅՍՈՒԻԻ ԾԱՐԾՈՒԻԻ ԴԵՄ

Ստոյդ է որ Հրատի ներքին գաւառներու բնակիչներուն ամենքն ալ դէպի բեւեռները գացած չեն, որովհետեւ ըստ Բէրսիվալ Լոուէլի՝ Հրատի վրայ կը գտնուի խելացի և կորովի ցեղ մը որոնք կրցան յաղթական կերպով մաքառիլ չորութեան դէմ: Յիշեալ Ամերիկացի աստեղագէտին համեմատ, Հրատ շրջապատուած է երկրաչափական կերպով շարուած գիծերու ցանցէ մը, որք Հիւսիսային Ովկիանոսէն մինչեւ Հարաւային Ովկիանոսթ կ'երկարին: Այս ջրանցքները աշնան աներեւոյթ կ'ըլլան և գարնան՝ միւնոյն տեղը կ'երեւան: Լոուէլ կը խորի թէ անոնք Հրատարնակ ժողովրդեան բացած ջրանցքներն են՝ Բեւեռային Ովկիանոսներէն ջուր բերելու համար: Եթէ այս ջրանցքները գարնան վերստին կ'երեւան, պատճառը այն է որ բուն իսկ ջրանցքները չեն որ կը տեսնենք մեր հեռագիտակներով, այլ այս ջրանցքներուն եղերքը գտնուած բուսականութիւնն է, այս բուսականութիւնը, ջրանցքներուն կանաչախիտ եղերք մը կը շինէ որով անոնք տեսանելի կ'ըլլան մեզ: Աշնան բուսականութիւնը անյայտ կ'ըլլայ և ջրանցքը այլ եւս չտեսնուիր:

### ՀՐԱՏԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻ ԼԵՌՆԵՐ ՈՒՆՔԻ, ԱՅՃՄ ԶՈՒՆԻ

Հրատի մակերեւոյթի վրայ գտնուած բազմաթիւ լրանցքները այնպէս ենթագրել տուած է թէ՝ այս մոլորակը լեռներ չունի: Ճշմարիտ է որ՝ եթէ այս մոլորակը լեռնագրական ցանց մը ունենար, մոլորակին լուսարձակութեան պատճառաւ չը պիտի կրնայինք վինքը տեսնել, ամէն պարագայի մէջ եթէ այս լեռները չկան այսօր: Հրատի հողը միշտ միօրինակ կերպով հարթ եղած չէ:



### ՊՈՂՊԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

	Թօնո.
Միացեալ Նահանգներ	20,354,291
Գերմանիա	10,066,553
Ա.սլիա	5,983,691
Գաղիա	2,110,000
Ռուսիա	1,650,000
Ա.ստրիա	1,118,000
Պէլճիքա	1,023,500
Սպանիա	237,874
Իտալիա	117,300



## ԵՐԱԶԱԼԱՆ

Ա.

Աստուած տեսնել՝ շատ լաւ է տեսնողին համար, որ ըստ  
օրէ պատիւը կ'աւելնայ, եթէ բանան է՝ կ'ազատին  
եթէ աղքատ է՝ կը հարստանայ, եթէ հիւանդ է՝ կ'առ  
ողջանայ:

Աքեղայ տեսնել՝ փառք եւ պատիւ է կամ կռիւ:

Ագուաւ տեսնել՝ կը նշանակէ որ թշնամիները իր վրայ  
պիտի յարձուկին, պէտք է աղօթէ որպէս զի աղատին  
Աթու տեսնել՝ մեծութիւն է: Աթուը կանաչ տեսնել  
ցաւ է:

Ալեւոր տեսնել ինքզինքը՝ հարստութիւն և շահ է:

Ալիւր տեսնել՝ շահ է:

Աղ տեսնել՝ կոկիծ է: Աղ (ապիտակ)՝ դրամ է և շահ:

Աղ (աեւ)՝ գէշ խօսքեր և տրտութիւն է:

Աղի ձուկ տեսնել՝ կոկիծ և հոգ է:

Աղանի տեսնել՝ չնորհք է:

Աղբ տեսնել՝ շահ է: Մարդու աղբը՝ անիրաւ վաստավ  
և շահ է:

Աղբեր տեսնել՝ շահ է: Աղբիւրէ լուացուիլ՝ շահ է: Աղբ  
բիւրէ ջուր առնել՝ լաւ չէ: Աղբիւրէ ջուր խմիլ  
չնորհք է:

Աղեղ տեսնել՝ շատ զրոյց և բամբասանք է:

Աղիւս տեսնել՝ տան շինութիւն է և լաւ է:

Աղուէս տեսնել՝ երկիւղ և հիւանդութիւն է: Աղուէս  
որապէ՝ թշնամոյն յաղթել է:

Աղջիկ տեսնել՝ ուրախութիւն է: Փոքր աղջիկ՝ բազում շահ  
և բարիք է: Աղջիկ երախայ՝ ցնորք և նեղութիւն է՝

Աղքատի բան տալ՝ շահ և բարի է:

Աճառ տեսնել՝ կոկիծ է:

Այծ տեսնել՝ ճանապարհ է:

Անապատը նստիլ՝ հիւանդութիւն է:

Անասուն տեսնել՝ արդար վաստակ է:

Անձրեւ տեսնել՝ շատ բարի է:

Անոյշ ուտել՝ շատ լաւ է:

Անուշահոս բաներ տեսնել՝ լաւ է:

Աչք հանել՝ կոնջը կամ զաւակացը մեռնելուն նշան է:

Ապարանջան տեսնել՝ նեղութիւն է և հոգ:

Առիւծ տեսնել՝ լաւ է:

Ասող տեսնել՝ շատ լաւ է: Ասողը իւր տանը մէջ տեսնել՝ հարստութեան աւելնալուն նշան է, եթէ օտարական է՝ խաղաղութեամբ տուն պիտի վերադառնայ:

Շատ աստղեր տեսնելը՝ ճամբորդելու և դրամ շահելուն նշան է: Եթէ աստղերը երկինքն իյնան՝ մեծերում մահ և կորուստ է:

Ատամն (առաջին) եթէ իյնայ՝ սուգ կը պատահի իրեն և կամ ճամբայ կ'երթայ: Առջեւի ատամները հանել՝ որդւոց մահ է: Ներքին ատամները հանել՝ արտմութիւն է: Եթէ վերի ատամները ելլան՝ աղգական կը մեռնի: Եթէ բոլոր ատամները իյնան՝ բազում գանձ կը գտնայ:

Արեգակ տեսնել՝ թագաւոր է: Արեգակը խաւարած տեսնել՝ չարիքի պատահման նշան է: Եթէ արեգակը երկինքն իյնայ՝ թագաւորներու մահ է:

Արիւն թափելը՝ մեծ վնաս է և կորուստ: Արիւն տեսնել՝ կամ արիւն առնել՝ չնորհք է:

Արծաթ տեսնել՝ նեղութիւն և ծանրութիւն է:

Արմաւ տեսնել՝ խիստ բարի է և անոյշ խօսք: Արմաւենին՝ զաւակ և ուրախութիւն է:

Արջ տեսնել՝ անիրաւ և տգէտ մարդոց խօսքեր են:

Աւագերէց (մեռած) եթէ տեսնես որ կենդանացած է՝ մեծ զրոյցի մը երեւան ելլալուն նշան է:

Աւազ տեսնել՝ արդար վաստակ և շահ է :  
Աւազակ եթէ տեսնես՝ կոփւէ զգուշացիր :  
Աւազան տեսնել՝ մեծ չնորհ է :  
Աւանդ առնել և պահելը՝ ուղղութիւն է :  
Աւետարան տեսնել՝ արդար ցանկութիւն է :

8

Բաղ տեսնել՝ մեծ մարդ է :  
Բահ տեսնել՝ լեզու է :  
Բաղնիք տեսնել՝ հոգ է : Բաղնիքէ դուս ելլես հոգէ  
կ'ազատիս : Բաղնիքի մէջ լուացուիլ՝ մեծ նեղութիւն է  
Բամբակ տեսնել՝ արդարութիւն և սրբութիւն է :  
Բանտ տեսնել՝ մեծ հոգ և սուդ է :  
Բանջար տեսնել՝ շահ է :  
Բարձրէն իյնալը՝ լաւ չէ, վնաս է : Բարձր տեղ ելլելը՝  
մեծութեան համնիլ է : Բարձր տեղէ իյնալը՝ պատիւէ  
իյնալու նշան է :  
Բերդ տեսնել՝ թշնամիներու վրայ իրաւունք ստանալ է :  
Բերդ մտնելը՝ ամրութիւն և պարիսպ է :  
Բեւեռ ժողվելը՝ լեզու է :  
Բողկ ուտեղը՝ առողջութիւն և շահ է :  
Բու տեսնել՝ նեղութիւն է :  
Բուրդ (ճերմակ) տեսնել կամ առնելը՝ մեծ առողջութիւն և արդար վաստակ ու շահ է : Աեւ բուրդը՝ սուդ և լաց է :  
Բուրվառ առնել կամ շարժելը՝ լաւ չէ, կոփւ է :  
Բրել կամ գործել՝ մեծ շահ է :  
Բրինձ տեսնել՝ շահ է և բարի է :

四

Գաղան տեսնել՝ կոիւ և վախ է, բայց առանց վեասի։  
Գաղանի խաղալը՝ թշնամիի հաշտութիւն է։ Գաղանի  
փախչիլ՝ խաղաղութիւն է։  
Գայլ տեսնել՝ նեղութիւն է։ Գայլը սպաննել՝ թշնամիի  
յաղթել է։  
Գանձ տեսնել կամ առնել շահ է։ Գանձ և կերպաս՝ շատ  
լաւ է։  
Գառնուկներ տեսնել՝ մեծ շահ է։ Գառնուկ մորթել՝  
լաւ չէ։  
Գարի տեսնել՝ շատ լաւ է։ Գարի ցանել կամ ժողվել՝  
թոշակ է։  
Գաւազան եթէ տեսնես՝ թշնամիիդ դէմ կը զօրանաս։  
Գաւազանը ձեռքին մէջ՝ որդի է կամ մեծ շահ։  
Գաւաթը ձեռքը բռնել՝ բարի զաւակ է։  
Գետը ինալ՝ նեղութեան մէջ ինալ է։ Գետէ ելլել՝  
փառք և պատիւ է։ Գետէ չելլել՝ անձին վլաս է։  
Խաղաղ կամ պղտոր գետէ անցնիլը՝ լաւ չէ։ Պղտոր  
գետը՝ առաստութիւն է։ Գետը լուացուիլը՝ նեղու-  
թիւն է։  
Գերանը եթէ կոտրի՝ տանուտէրը կը մեռնի։  
Գերեզման բանալը՝ վլաս է։ Ինքինքը գերեզմանը  
դնելը՝ գէշ է։  
Գերի տեսնել ինքինքը՝ մեծութիւն է և նեղութենէ  
աղատելու նշան։  
Գեր տեսնել ինքինքը՝ աղայոց շատնախն է։  
Գինի տեսնել՝ ըմպել կամ գնել, ոյժ և շահ է։  
Գինձ տեսնել՝ քաղցր իօսքեր են։ Գինձ ուտել կամ ժող-  
վել՝ կոիւ է։  
Գիսաւոր աստղ տեսնել՝ մեծութիւն և պատիւ է։

Գիր տեսնել կամ կարդալ՝ մարմնոյ նեղութիւն և ցաւ է :  
Գիր գրելը՝ բարի և արդար ցանկութիւն է :  
Գլուխը մարմնէն զատուած տեսնել՝ օտարութեան եր-  
թալու նշան է : Կտրուած գլուխը ձեռքին մէջ բռնել՝  
բազում գանձ գտնելու նշան է : Գլուխը դեղով օծել՝  
անոյ խօսքեր են : Եթէ գլուխդ ածիլեա՝ ամէն նե-  
ղութիւններէ կ'ազատիս : Գլուխ լուալը՝ վնաս է :  
Գլուխը ձերմակ տեսնել՝ յանկարծական շահ է :  
Գնդակ խաղալը՝ լաւ է իշխանի համար, խակ փոքր մար-  
դու համար՝ լաւ չէ :  
Գոտի տեսնելը՝ հարստութիւն է :  
Գոմ շինելը և գոմէշ տեսնելը՝ շահ և ուրախութիւն է :  
Գորտ տեսնելը՝ հաւաաացեալ մարդ է : Գորտի ձայն լսե-  
լը՝ ուրախութեան լսոր է :  
Գդակ գնելը՝ պատիւ է :  
Գրիչ և կաղամար տեսնելը՝ խելք է կամ ճամբայ :

Դ.

Դահեկան՝ մէկէ մը առնել կամ տեսնել, շահ է, կի՞ն  
կ'առնէ կամ տղաքներ կ'ունենայ :  
Դանակ տեսնել կամ գնել՝ չար լեզու է : Դանակ կոր-  
սրնցնես՝ լեզուն կը խափանի :  
Դաշտ տեսնել՝ վախնալիք բաներ կ'ընես : Դաշտէն դուրս  
ելլել՝ նեղութենէ ազատիլ է :  
Դատաւորը՝ Աստուած է : Դատաւոր տեսնել՝ պատիւը  
աւելնալ է :  
Դարբին տեսնել՝ մեծ մարդ է :  
Դղում տեսնելը՝ հիւանդին աղէկութիւն է : Դղում ցա-  
նել՝ ջերմ և ուրիշ հիւանդութիւն է :  
Դեղին սեխ՝ դեղին հանդերձ՝ դեղին ձի՝ դեղինը ունէ  
բանէ գէշ է և հիւանդութիւն :

Դեւ տեսնել՝ վնաս և նեղութիւն է և մեղքի նշան :  
Դիակ տեսնել՝ բարի զրոյց է :  
Դիպակ տեսնել կամ հագնիլ՝ մեծ պատիւ է :  
Դուռ տեսնել կամ առնել՝ պատիւ է և մեծ մարդու հետ  
ծանօթանալ : Դուռ բանալ՝ յաջողութեան նշան է :  
Դուռը եթէ իյնայ՝ մեծ մարդ կ'իյնայ և կործանում է :  
Դուռը եթէ կոտրի՝ մահուան նշան է : Դուռը ելլելը՝  
լաւ չէ :  
Դրամ տեսնել կամ ժողվել՝ ագահութիւն է :  
Դրային բարեւելը՝ կոխւ է :

Ե.

Եղ տեսնել՝ վախը կը փարատի : Եղ նստիլը՝ անհոգու-  
թիւն է կամ մեծ աւետիս մը կուգայ և կամ սիրելի  
թիւն է կամ մեծ աւետիս մը կուգայ և կամ սիրելի  
թիւն է կամ շնորհութիւն է : Եղները լուծը դնել՝  
զրոյց է : Եղ մորթել՝ շատ գէշ է :  
Եկեղեցի տեսնել կամ շինելը՝ փառք է, ոմանք կ'ըսեն  
թէ նեղութիւն է : Երազին մէջ եկեղեցի երթալը՝ կը  
նշանակէ որ կեսնքը լաւ պիտի ըլլայ : Եկեղեցի եր-  
թալ տեսնել՝ ծանրութենէ ազատելու նշան է :  
Եղ ուտելը՝ լաւ է :  
Եղունգները կարել՝ վնաս է :  
Եղնիկը տանը մէջ տեսնել՝ զուգակիցը կամ սիրելին  
կուգայ :  
Եղջերուն՝ երկրի նեղութիւն է :  
Երազի մէջ երազ պատմելը՝ լաւ չէ :  
Երակ կարելը՝ մահ է :  
Երգիռոն՝ արտօնութիւն է :  
Երես լուալը՝ վնաս է :  
Երէց մը մեռած տեսնել՝ մեծ զրոյց մը կը խափանի :

Երէց մը եթէ յարութիւն առնէ՝ հին զրոյց մը մէջտեղ  
կ'ելլէ։  
Երկաթ տեսնել կամ գնել՝ տրտմութիւն է և շատ գէլ։  
Երկաթով ծեծելը՝ նեղութիւն է և ցաւ։

Զ.

Զանդակի ձայն լսելը՝ ուրախութիւն է։  
Զինուոր եթէ տեսնես՝ զգոյն եղիր, վասն զի տրտմու-  
թիւն է։  
Զմրուխտ տեսնել՝ լաւ է։  
Զրահ տեսնել՝ մեծութիւն է։ Զրահ հաղնիւ՝ վեսա է։

Է.

Էշ (սպիտակ) տեսնել կամ վրան հեծնել՝ բարիէլ և պատիւ-  
եշեր տեսնելը՝ նեղութիւն է։

Ը.

Ընկուզի ծառ տեսնել՝ խակութիւն է։ Ընկոյզ ժողվելը՝  
լաւ չէ։

Թ.

Թագաւոր տեսնել՝ չափազանց լաւ է։ Թագաւոր ող-  
ջունելը՝ փառք է։  
Թագուհի տեսնել՝ լաւ է։  
Թանաքը իր վրան թափել՝ չար խօսքերու նշան է։  
Թարախոս տեսնել ինքզինքը՝ շահ և հարստութիւն է։  
Թղենիի ծառը՝ լրբութեան նշան է։  
Թթենին՝ մեծատուն մարզու նշան է։  
Թուզ (կանաչ) տեսնել կամ ուտել՝ վեսա և մեղք է։  
Թուզ (չոր) ուտել՝ շահ է։

Թուխ մօրուքը ալեւոր տեսնել՝ շահ է։  
Թուր տեսնել՝ պաաիւ է։  
Թռչիլը՝ ուրիշ տեղ երթալու և մեծութեան նշան է։  
Թռչուն արձակելը՝ մեծ բարութիւն է։ Թռչուններուն  
կոռւիլը՝ վեսա է։

Ժ.

Ժամ ըսելը՝ բարի է։  
Ժամացոյց տեսնելը՝ հոգէ ազատելու նշան է։  
Ժողովք տեսնելը՝ ազմուկ է։

Ի.

Իշխաններու հետ խօսիլը՝ բարի է և յանկարծական չորհք

Լ.

Լալը՝ մեծութեան և ուրախութեան նշան է։  
Լեռ (բարձր) եթէ տեսնես՝ տրտմութենէ կ'աղատիւ։  
Լեարդ ուտելը՝ լաւ չէ։  
Լեմոնը՝ անուշ խօսք է։  
Լոյս տեսնել՝ խաղաղութիւն է։ Լոյս մարած՝ տրտմու-  
թիւն է։

Լու տեսնել՝ շահ է։

Լուս տեսնել ցերեկ ժամանակ երադի մէջ՝  
Լուսին և արեգակ տեսնել ցերեկ ժամանակ երադի մէջ՝  
ազգի վեսա է։ Լուսինը խաւարած տեսնել՝ թագաւորի  
մահ է։ Լուսինը կարմրցած՝ վեսա է։ Լուսինը երկու  
հատ տեսնել՝ երկու թագաւորներու մէկը մէկու հետ  
կոռւելուն նշան է։ Լուսի աստղը՝ մեծ շահ է։

Խ.

Խաղող տեսնել՝ խաղողի ժամանակը լաւ է։ Խաղող  
(սպիտակ) ուրախութիւն է։ Խաղող ժոլվել՝ դանձ է։  
Խաչ տեսնել՝ չարչարանք է։

Խաչակնքելը՝ մեծ պատւոյ նշան է :

Խաւարը՝ նեղութիւն է :

Խմոր ուտելը՝ շահ է :

Խնդալը՝ լաւ չէ :

Խնձորը՝ տղայ և աղախին է և ուտելը շահ : Խնձորը եթէ քեզ տան՝ աւետիս է :

Խող տեսնել՝ մահ է : Խողի միս ուտելը՝ աղգականաց մահ է :

Խոտ ժողվելը՝ պատիւ է :

Խորոված միս ուտելը՝ շահ է :

Խունկ ծխելը՝ ինչք և վաճառք են :

Խստոր տեսնել կամ ուտել՝ կոկիծ է :

Յ.

Մաղիկը՝ անհոգութիւն է : Մաղիկ քաղողը՝ կին կ'առնէ : Մաղկած ծառը՝ լաւ է : Մառ տնկելը՝ շատ լաւ է : Մառ (պտուղով) լաւ է : Մառին տերեւները եթէ թափին՝ արիւնհեղութիւն է : Մառին իյնալը՝ մարդու մահ է : Մառի վրայ նստած տեսնել՝ փառք է : Մառ (կանաչ) տեսնել՝ գանձ է :

Մեր ալեւոր տեսնելը՝ շահ է :

Միծաղիկը՝ արտօմութիւն է :

Միրան ուտելը՝ նեղութիւն է :

Մող տեսնել՝ շատ նեղութիւն է : Մողը լուացուի՝ շահ է :

Մնրաղրելը՝ մեծ յոյս է :

Կ.

Կաղամար աեսնելը՝ ճամբայ է :

Կամուրջ շինելը շատ լաւ է :

Կայծակը՝ խոռվութիւն է :

Կանանչ ծաղիկը՝ բարի է :

Կապոյտը՝ աւերում է :

Կառք տեսնելը կամ մէջը նստիլը՝ մեծ պատիւ է :

Կարոսը՝ նեղութիւն է :

Կին տեսնել՝ լաւ է և անոր կամքը կը կատարուի : Կին առնելը՝ վնաս է : Կոկան հետ նստիլը՝ բարի է : Ուրիշ կողոջ հետ խօսիլը՝ տրամութիւն է :

Կոչնակի ձայն լսել՝ տրամութիւն է :

Կոյսի հետ հաց ուտելը՝ բարի է :

Կտաւ հանելը՝ լաւ չէ :

Կոչիկ տեսնել կամ հագնիլ՝ ճամբայ է :

Հ.

Հագուստ տեսնել՝ ուրախութիւն և չնորհք է :

Հաղորդ առնելը՝ հարուած է :

Համբ տեսնել՝ շահ է :

Հայրը (մեռած) կենդանացած տեսնել՝ մեծ շահ է :

Հանդերձը կորանցնել՝ վնաս է :

Հառկ քաղելը՝ ուրախութիւն է :

Հարսնիքը՝ տրամութիւն է :

Հաց տեսնել կամ ուտելը՝ բարի և լաւ է :

Հաւ տեսնել՝ լաւ է :

Հիմ դնել՝ հարսառութիւն է :

Հիւանդ տեսնել՝ նեղութիւն է :

Հոր փորել՝ նեղութիւն է :

Հում միս ուտելը՝ մեծ զրոյց է :

Զ.

Զեռք լուալ՝ երազի մէջ, լաւ է : Զեռքը ճրագ տեսնել՝ զաւակ ունենալու նշան է :

Զէթ եփելը՝ հիւանդութիւն է :

Զի նստիլը՝ փափաքներու կատարում է և լաւ։ Զի (ձերս  
մակ կամ սեւ) տեսնել՝ բարի է։

Զիթապտուղ ժողվելը՝ բարի է։

Զկան ձու տեսնելը՝ հիւանդութիւն է։

Զաւ տեսնել կամ ժողվել՝ կոիւ է։

Դ.

Ղամբար վարել՝ բարի է։

Ղենջակը՝ լաւ չէ։

Ճ.

Ճամբայ երթալը՝ նեղութենէ ազատելու նշան է։

Ճնձղուկ տեսնել՝ բարի է։

Ճրագ (վառած) տեսնել՝ ծածուկ գործերուն յայտնուես-  
լուն նշան է։

Մ.

Մածուն ուտելը՝ անարժան վաստակ է։

Մատանի տեսնել կամ շինել տալ՝ իշխանութիւն է։ Մա-  
տանին կոտրած տեսնել՝ վնաս է։ Մատանի կորսնցնել՝  
կնոջ կամ սիրելի մը ման է։ Մատանի երկու համ  
ունենալ՝ երկու կին առնելու նշան է։ Մատանի ար-  
ծաթ՝ նեղութենէ ազատիլ կը նշանակէ։

Մարգարիտ տեսնել՝ մեծութեան նշան է։

Մեղր ուտելը՝ մեղք և անձկութիւն է։

Մեռած մէկը տեսնել կամ մեռելէ բան մը առնել՝ և կամ  
մեռեալը կենդանացած տեսնել՝ անցեալ բան մը նորէն  
մէջտեղ ելլելու նշան է։ Մեռած տեսնել ինքվինքը՝  
երկայնակեցութիւն է։ Մեռեալը եթէ խօսի՝ զգոյն  
եղիր մէկու մը հաւատար։ Մեռեալէ բան մը առ-  
նել՝ շահ է։

Միս (աղի) տեսնել կամ ուտել՝ հիւանդութիւն է։

Միրդ ուտել՝ հիւանդութիւն է։

Մոմ վառած տեսնել՝ սրտի ուրախութիւն է։

Մարախը՝ վիշտ և աշխարհի նեղութիւն է։

Մութը՝ վնաս է և չար։

Մուկը՝ վնաս է և չար։

Մօրը հետ քնանալ՝ անհոգութիւն է։

Մօրուօք ինքվինքը տեսնել՝ շնորհք է։

Յ.

Յիսուս տեսնել արքայութեան արժանանալու նշան է։

Յակինթը՝ ծառայութիւն է։

Յարդը՝ բարի է։ Յարդի դէզը՝ մտաց երերում է։

Յղի տեսնել՝ շատ բարի է։

Յուղարկաւորութեան երթալ՝ բարի ճանապարհ է։

Յօրանջելը՝ պատոյ արժանի ըլլալու նշան է։

Ն.

Նապաստակ տեսնել՝ զաւակ ունենալու նշան է։

Նաւ նստիլը՝ պատոյ և երկայնակեաց ըլլալու նշան է։ Նաւ

Շատ մը նաւեր տեսնելը՝ հեռուէն գալիք շահ է։ Նաւ կոտրած տեսնել՝  
գանձով լեցուն՝ նեղութիւն է։ Նաւ կոտրած տեսնել՝  
մահուան նշան է։

Նաւորդ ըլլալը՝ զրոյցի նշան է։

Նուռ տեսնելը՝ օտարներէն շահ է։

Շ.

Շան հաջելը կամ խածնելը՝ լեզու է, չար մարդիկներէն  
պէտք է զգուշանալ։

Շապիկ (սպիտակ) տեսնել կամ հագնիլ՝ արդարութիւն է,  
սեւ շապիկը՝ արտամութիւն է, աղտոտը՝ մեղքի նշան է։

Շէնք շինելը՝ լաւ է, քանդելը՝ վնաս է:  
Շիշ իւղով տեսնել՝ շահ է:  
Շունը կամ թունաւոր գաղանները՝ թշնամիներ են:

Ո.

Ողջոյն տալ երազի մէջ՝ կռիւ է:  
Ոչխար տեսնել՝ լաւ է: Ոչխար սեւ՝ սուզ է:  
Ոջիլ կոտրելը՝ մաշում է:  
Ոսկին կամ արծաթը՝ մեծ շահ է:  
Որսի երժալ՝ բարի է:  
Ուղտ տեսնել՝ մեծութիւն է: Ուղտեր տեսնել՝ լաւ չէ:  
Ուղտի վրայ նստիլ՝ պատիւ է:

Զ.

Չաման տեսնել՝ կռիւ է:  
Չամիչը՝ շատ վնաս է:  
Չոր միար՝ շահ է:  
Չուխայ (սպիտակ) տեսնել՝ արդարութիւն է: Չուխայ (կանաչ)՝ հարստութիւն է: Չուխայ (սեւ) արտմութիւն է:

Պ.

Պատարագ տեսնել՝ կռիւ է:  
Պարկուկ ուտել՝ արտմութիւն է:  
Պարտէզը՝ բարի է և արդարութիւն: Պարտէզի մէջ աշ-  
խատիլ՝ լաւ է:  
Պղպեղ տեսնել՝ կոկիծ է: Պղպեղ եթէ ուտես՝ թշնամի-  
ներէդ զգուշացիր:  
Պսակուիլը՝ յոյժ բարի է, ոմանք կ'ըսեն թէ կռիւ է:  
Պսակ (փուշէ), մեծ շահ է:

Զ.

Ջաղացք շինել՝ մեծութիւն է:  
Ջորի նստիլը՝ շահ է:  
Ջուր խմելը՝ շատ լաւ է: Ջուրը տան մէջ տեսնել լաւ  
չէ: Ջուր (պղատոր) տեսնել կամ խմել՝ արտմութիւն է:  
Ջուրը գետէն առնել՝ վնաս է, իսկ աղբիւրէն առնել՝  
բարի է:  
Ջրհոր տեսնել՝ անորոշ վիճակ է: Ջրհորը ինսալ՝ նեղու-  
թեան հանդիպելու նշան է: Ջրհորէ ելլելը՝ պատիւ և  
աղատութիւն է:

Ո.

Թումբը ձեռքին մէջ ունենալ՝ ճամբայ է:

Ա.

Սագ տեսնել՝ մեծ մարդ է: Սագի միս ուտելը՝ հիւան-  
դութիւն է:  
Սալորը՝ առողջութիւն է:  
Սաղաւարտը՝ անհոգութիւն է:  
Սայլ տեսնել կամ սայլի մէջ նստիլ՝ նեղութիւն է:  
Սանդուղ տեսնել՝ մեծութիւն և բարի է:  
Սանձ տեսնել՝ ծանրութիւն է:  
Սանտրուիլը՝ վնաս է:  
Սառոյց կուրելը՝ չարին խափանելուն նշան է:  
Սեխը՝ բարի է:  
Սենեակ քակելը՝ կնոջմէն բաժնուելուն նշան է:  
Սերմանելը՝ շատ լաւ է:  
Սիսեռը՝ բարի է:  
Սիւն տեսնել՝ նեղութիւն և կռիւ է:

Սոխը և աճառը՝ կոկիծ է : Սոխ ուտելը՝ հիւանդութիւն է :

Սուգը՝ ուրախութիւն է :

Մտինք տեսնելը՝ աղայ է կամ մեծութիւն :

Վ.

Վանք և աբեղայ տեսնելը՝ նեղութիւն է :

Վառած տեսնել ինքզինքը՝ մեծութիւն է :

Վարդ տեսնել՝ կին առնելու նշան է : Վարդ քաղել՝ բարի է :

Վարունգ ուտելը՝ ուրախութիւն է :

Վարտիք տեսնելը՝ բարի է :

Վիշապ տեսնելը՝ մեծութիւն է, ոմանք կ'ըսեն թէ նեղութիւն է :

Տ.

Տաճարը զարդարուած տեսնելը՝ բարի է :

Տաճիկ տեսնելը՝ թշնամեաց յարձակում է :

Տանձ ուտելը՝ հիւանդութիւն է :

Տզրուկը՝ շատ գանձ է :

Տիկ տեսնելը՝ տրամութիւն է :

Տղայ գիրկը ունենալը՝ ցաւ և հիւանդութիւն է :

Տուն շինելը՝ շատ լաւ է :

Յ.

Յելսը՝ վեաս է և տրամութիւն :

Յիցը՝ լեզու է :

Յորեն տեսնելը՝ ցնորք է :

Փ.

Փայտ տեսնել կամ առնելը՝ շատ բարի է :

Փող զարնելը՝ թշնամիին կորսուելուն նշան է : Փող տեսունելը՝ նելը կամ փողի ձայն լսելը՝ անձրեւ է կամ կոիւ :

Փուշ կարելը՝ թշնամիիներուն կորսուիլն է :

Փ.

Քաղաք մտնել՝ լաւ է :

Քաղցր բան ուտել՝ լաւ չէ :

Քար ժողվել՝ լեզու է :

Քարի վրայ նստիլ՝ հոգ է :

Քացախ խմել՝ չարին խափանելուն նշան է :

Քրքումը՝ հիւանդութիւն է :

Օ.

Օձի հետ ով որ կը խօսի՝ այնպիսի բան մը կ'ընէ որ աշխարհ կը զարմանայ : Օձ սպաննելը՝ թշնամիին յաղեւել է : Օձը անկողնին մէջ տեսնել՝ կին առնելու նշան է : Օձը եթէ յաղթէ՝ թշնամիներէն վեաս կունացայ : Օձ տեսնել և չը վախնալ՝ թշնամիներէն անհոգ ըլլալու նշան է : Օձը տանը մէջ տեսնողը՝ կնոջը հետ կը թշնամանայ : Օձը երկուքի կարողը՝ իւր թշնամիներէն շահ կը գանձ :

Օղի խմելը՝ ուրախութիւն է, բայց ոմանք կ'ըսեն թէ արտօնութիւն է :

Օձառը՝ կոկիծ և նեղութիւն է :

Օխնդը՝ կակիծ և նեղութիւն է :



## ԾԱՂԿԱՆՑ ԼԵԶՈՒՆ

Ծաղիկները կարելի է միացնել և այնպէս մը կարութադրել որ զգացմանց ամենանուրբ ձեւերը արտայայտեն :

Եթէ ծաղիկ մը վշջած տալու ըլլաք իրեն նշանակութիւնն ալ բոլորովին հակառակը կ'ըլլայ :

Փուշերէն մերկացած վարդի կոկոն մը, տերեւները միայն վրան ըլլալով՝ կը նշանակէ «Այլ եւս չեմ վախնար» կը յուսամ» . եթէ տերեւները և փուշերն ալ հանուած ըլլան կը նշանակէ «Յուսալու կամ վախնալու բան չկայ» :

Երկու կոկններու մէջ դրուած բացուած վարդ մը կը նշանակէ «Գաղտնապահութիւն», տրուած ծաղիկն եթէ շրթունքնուղ տանիք «Այո» կը նշանակէ, եթէ բեր նովնիդ թերթիկ մը փրցնէք և նետէք «Ոչ» կը նշանակէ :

Ծալլուած բաղեղի տերեւ մը կը նշանանակէ «Ունիմ» :

### ԶՈՒԳԱԽԱՊՆՈՒԹԻՒՆԻ

Վարդի կոկոն և մրտենի — Սիրոյ արտայայտութիւն :

Շահոքրամ և գունաւոր մարգարտադաղիկ — Զեր յատ կութիւնները՝ կը գերազանցեն գեղեցկութեան ձեր հրապոյրները :

Հովաշուշան և պտեր — Զեր անդիտակից քաղցրութիւնը թովեց զիս :

Դեղին վարդ, կոտրած յարդ մը, և բաղեղ — Զեր նախանձը բարեկամութիւնիս աւրեց :

Կարմիր խորդածաղիկ, անուածաղիկ, ծիրանեգոյն յաշ կինթ — կը յուսամ թէ պիտի միսիթարուիք ձեր հաւատքովը ձեր ախրութեանը մէջ, ապահով եղէք իմ անփոփխելի բարեկամութեանս վրայ :

Կայոին, ընծախոտ, հոտոլոռ և յիշածաղիկ — Զգուշա-

ցիր, վտանգը մօտ է, շուտով կը մեկնիմ, մի մոռնար զիս :

Ճերմակ կամելիա — Սիրունութիւն :

Բուխտակ — Անտարբերութիւն :

Շահոգրամ մութ կարմիր — Աւազ, խեղճ սիրտս :

Շահոգրամ ճերմակ — Արհամարհանք :

Ճենաստղիկ — Պէսպիսութիւն :

Առույթ քառատերեւ — Իմս եղիր :

Առույթ ճերմակ — Վրաս խորհե :

Սեպուն — Յիմարութիւն :

Մարգարտածաղիկ — Անմեղութիւն :

Շիկատակ — Ստութիւն :

Վայրի ձարխոտ — Հրապոյր :

Յիշածաղիկ — Ճշմարիտ սէր մի մոռնար զիս :

Փուքսիա կարմիր — Ճաշակ :

Խորդածաղիկ կարմիր — Միսիթարանք :

Խորդածաղիկ վարդագոյն — Նախապատութիւն :

Կայոին — Զգոյշ եղիր :

Արեւածաղիկ — Անձնուիրութիւն :

Մեղրածաղիկ — Գաղտնի սէր :

Յակինթ ճերմակ — Անարդել սէր :

Բաղեղ — Հաւատարմութիւն :

Շուշան ճերմակ — Սիրունութիւն :

Շուշան դեղին — Զուարթութիւն :

Յովաշուշան — Երշանկութեան վերադարձ :

Ընծախոտ — Վտանգը մօտ է :

Մրտենի — Սէր :

Նարնջածաղիկ — Պարկեշտութիւն :

Խողածաղիկ — Խոկմունք :

Անուածաղիկ — Հաւատք :

Դեղձածաղիկ — Քու գերիդ եմ :

Գարնանածաղիկ — Անհաստատամութիւն :

Վարդ — Սէր :

Վարդ , մութ կարմիր — Ամօթ :

Վարդ , դեղին — Նախանձ :

Վարդ , ճերմակ — Քեղի արժանի եմ ,

Վարդի կոկոն — Սիրոյ արտայայտութիւն :

Յարդ — Համաձայնութիւն :

Յարդ կոտրած — Աւրուած համաձայնութիւն :

Հոտոլոռ — Մեկնում :

Բրաբիոն — Վտանգաւոր հաճոյքներ :

Աղանարօս — Աղօթէ ինձ համար :

—○—○—

ՏՈԿՈՍԻ ԴՐՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՒԻՆ ԿՐԿՆԱՊԱՏ-  
ԿՈՒԵԼՈՒԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Տոկոսի սակը	Պարզ տոկոսով	Բաղադրեալ տոկոսով
Հարիւրին		
10	10 տարի	7 տարի 100 օր
9	11 » 40 օր	8 » 16 »
8	12 <sup>1</sup> / <sub>2</sub> »	9 » 2 »
7	14 » 104 օր	10 » 89 »
6	16 » 8 ամիս	11 » 327 »
5	20 »	14 » 75 »
4 <sup>1</sup> / <sub>2</sub>	22 » 81 օր	15 » 273 »
4	25 »	17 » 246 »
3 <sup>1</sup> / <sub>2</sub>	28 » 208 օր	20 » 54 »
3	33 » 4 ամիս	23 » 164 »
2 <sup>1</sup> / <sub>2</sub>	40 »	28 » 26 »
2	50 »	35 » 1 »

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԳ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արիք Հայկազունք , յառաջ ընթանանք ,  
Սահմանադրութեան նոր բարեւ մալ տանք .  
Ո՞ր Աղգն երբ զանի փրկարար կոչեց ,  
Նո՞ր հոգի նոր կեանք Անոր պարգեւեց :  
Եկա՛յք բարեկա՛մք , առ բարձրեալն Աստուա  
Ռւղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղիսած  
կեցցէ , կեցցէ , կեցցէ միշտ՝  
Աղգն ու Սահմանադրութիւն :

Ջրկանք , բռնութիւն վատթար վարչութեան ,  
Բերին ման ի դուռն Հայոց աղդութեան .  
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց ,  
Եւ կենաց ուղին մեր առջին հարթեց :  
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ ,  
Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ .  
կեցցէ , կեցցէ , կեցցէ միշտ  
Աղգն ու Սահմանադրութիւն :

Զնջեց ամենայն կարծիք անձնական .  
Խեղդեց ամենայն ձայն անհատական .  
Հըրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին ,  
Առաջնորդ լինել գործոց աղգային :  
Այն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի ,  
Մենէ թող առնու ձայնով մայնպիսի .  
կեցցէ , կեցցէ , կեցցէ միշտ  
Աղգն ու սահմանադրութիւն :

Հայերս անարդուած գրկեց բարձրացուց,  
Մարդկային կոչման մեղ արժանացուց.  
Եղնորհեց մեղք զոր ազատն Աստուած,  
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած:  
Որուն չնորհիւ յարդ ստացանք մենք,  
Անոր յարդ ապրինք ու երգենք.  
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ  
Աղջն ու Սահմանադրութիւն:

Դու ալ Հայաստան, սիրուն հայրենիք,  
Ալ այսուհետեւ մի սըգար լոիկ.  
Զի ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ,  
Զքեզ հարս կ'ուզեն տեսնել զարդարեալ:  
Ալ մի լար մայրիկ, լացդ ի պար փոխէ,  
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.  
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ  
Աղջն ու Սահմանադրութիւն:

Հայեր. միանանք մեր մօրն հետ օրհնենք  
Զանոնք որ մեզի տուխն սուրբ օրէնք.  
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,  
Թո՛ղ վարեն ուրախ կեանք մի փառունակ:  
Թո՛ղ և մեր որդիք հետ անոնց անուան,  
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.  
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ  
Աղջն ու Սահմանադրութիւն:

Յ. Գ. ՍԼՎԱԶԵԱՆ

### ՏԱԼԻՈՐԻԿ

Տալւորիկի զաւակ եմ զորդ  
Քաղքցու պէս չեմ թուլամորթ,  
Սարի զաւակ, քարի որդի  
Հին քաջ հայոց եմ մնացորդ.

Տալւորիկի զաւակ եմ քաջ  
Չեմ խոնարհիր Քըրդի առաջ  
Քարոււ լեբանց եմ ազատ լաճ  
Չեմ տեսել ոչ արօր ոչ մաճ:

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք  
Տալւորիկի զաւակ եմ քաջ  
Աղատութեան սիրոյն համար  
Եկէք դէպ ինձ յառաջ յառաջ:

Երբ իմ աչքերս բացի յաշխարհ  
Աղատ տեսայ մեր սար ու քար  
Մինչ չփակեմ աչքս ի խաւար  
Պիտ' չը կոփեն հոս ոտք օտար.

Իմ մամ ծնաւ զիս սարերու ծոց,  
Ըսկոյզի կրծկ մինձ օրօրոց  
Տըլլող ծընայ, մեծցայ տըլլող  
Կեանքիս բաժինն է կոփւ ու բոց.  
Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք ևն:

Ոտքըս բոպիկ, կուրծքըս միշտ բաց  
Ինչ փոլթ թէ քոյրս ալ մերկ մնաց  
Ինձ մօա մէկ է արև, փուք, ցուրտ  
Բաւ է շիշէ Պարսիկ կամ թուրդ:

Իմ կեանքըս խիստ է և չարքաշ  
Փափուկ կեանքի բնաւ չեմ վարժ  
Բնակարանս է ապառաժ  
Ընկերս՝ մրրիկ ու երկրաշարժ.

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն :

Հարստութիւն, ուսում, հանճար  
Փառք ու պատիւ չեն ինձ համար  
Բաւ է ունիմ տէգ, թուր, խանչար  
Բնաւ չի խրոխտար վրաս օտար.

Սիրած զէնքերս չեմ ձգեր ձեռքէս  
Առիւծն անվախ չէ ինծի պէս  
Կը սիրեմ որս, կոփւ, աւար  
Կը սպասեմ երբ ինկնի հաւար.

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք ևն :

Թող Հայք բնակին հովիտ ու դաշտ  
Վատ ազգին հետ չը լինին հաշտ  
Ես պիտ' մնամ միշտ աննուած  
Թէւ վրաս դայ քսան վաշտ.

Ճորենի տեղ կ'ուտեմ կորեկ  
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ  
Շինեմ փետատ, խոփ, խաչերկաթ  
Մանր է դատումս, բայց եմ ազատ.

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն :

Այծեամի պէս կը ցատկուեմ  
Առիւծի պէս կը մռնչեմ  
Ծովի նման կը փրփրիմ  
Կայծակի պէս կը հարուածեմ.

Կուոյ դաշտը բազդն է կեանքին  
Երբ կը ծագի արշալոյսը  
Կամ աւետիս տայ դրօշակին  
Կամ պաղ տեսնէ քու երեսը

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն :

Հաւար ինկնի երթամ յառաջ  
Սամոյ լերինք հանեն հա՛ռաչ  
Հառաչ հանեն եւ ներկուին  
Իւր կտրձի արիւնով քաջ :

Կտրձին ուրտ, կտրձին ձեռք  
Ինչ փոյթ քաջին հազար մէկ վէրք  
Մէկ հարուածին կուտաս հարիւր  
Ագռաւին լէշ կանես հազէր

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն

## ԵՐԳ ՈՒՐԱԿԽՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ուրախութեան,  
Ի սէր յաւէրժ միութեան,  
Զի վայելուչ՝ որդիք Հայկեան,  
Մէկտեղ հրճուին և ցնծան :

Կեցցէ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Վերցուր աչքըդ յերկնից կամար:  
Փայլի հեռուն աստղ մի պայծառ,

Եւ դու, ո՛ Հայ, զարթիր սիրտ առ :  
 Հայոց բախտըն ա՛լ չէ խաւար :  
 Կեցցէ՛ սէր և միութիւն  
 Կրեմք մի սիրտ մի արիւն :

Բա՛ւ է այսչափ բաժանում,  
 Ըլլամք ուրախ և խնդում .  
 Նախանձ, վրէժ ձեզ թողում,  
 Անդունդք և վիճք անհատնում :  
 Կեցցէ՛ սէր և միութիւն  
 Կրեմք մի սիրտ մի արիւն :

Փորձ մը ըրինք բաժանման,  
 Փորձ մալ ընենք միութեան .  
 Լեցուի փափաքդ Հայատան,  
 Տես որդիք քո միանան :  
 Կեցցէ՛ սէր և միութիւն  
 Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ինչ և ընեմք ինչ կերպ առնեմք ,  
 Ո՞չ չը գիտաց թէ մենք Հայ եմք .  
 Ո՞վ չը գիտեր թէ եղբայր եմք ,  
 Արիք ծիծաղ գիմօք երգեմք ,  
 Կեցցէ՛ սէր և միութիւն  
 Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ո՞ր բռնաւոր ո՞ր օրէնքներ  
 Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր  
 Ազգիդ օգուտն ու բարիքներ ,  
 Սիրոյ գահն է յերկինս 'ի վեր :  
 Կեցցէ՛ սէր և միութիւն  
 Կրեմք մի սիրտ մի արիւն :  
 Ա. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

### ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից ,  
 Երբ հաճեցաւ շունչ փէել  
 Իմ հողանիթ շինուածքին ,  
 Կենդանութիւն պարգեւել :

Ես անբարբառ մի մանուկ ,  
 Երկու ձեռքս պարզեցի .  
 Եւ իմ անզօր թեւերով ,  
 Ազատութիւն գրկեցի :

Մինչ գիշերը անհանգիստ ,  
 Օրորոցում կապկապած .  
 Լալիս էի անդադար ,  
 Մօրս քունը խանգարած

Ինդրում էի նրանից ,  
 Բազուկներս արձակել ,  
 Ես այն օրից ուխտեցի ,  
 Ազատութիւնը սիրել :

Թոթով լեզուիս մինչ կապերն ,  
 Արձակուեցան բացուեցան .  
 Մինչ ծնողքըս իմ ձայնից  
 Ինդացին ու բերկեցան :

Նախկին խօսքն որ ասացի ,  
 Զէր հայր կամ մայր , կամ այլ ինչ .  
 Ազատութիւն դուրս թռաւ ,  
 Իմ մանկական բերանից :

«Ազատութեան , ինձ կրկնեց ,  
Ճակատագիրը վերեւից .  
Ազատութեան դու զինուոր  
Կամի՞ս գրուիլ այս օրից :

«Ո՞հ , փշու է ճանապարհոք ,  
Քեզ շատ փորձանք կ'սպասէ .  
Ազատութիւն սիրողին ,  
Այս աշխարհու խիստ նեղ է » :

— Ազատութիւն , — գոչեցի , —  
Թող որոտայ իմ գլխին .  
Փայլակ , կայծակ , հուր , երկաթ ,  
Թող դաւ դընէ թշնամին .

Ես մինչ ի մահ , կախաղան ,  
Մինչեւ անարդ մահու սիւն ,  
Պիտի գոռամ պիտ' կրկնեմ ,  
Անդադար ազատութիւն :

Մ . ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

### ՍՈՒԳ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Իմ սիրելի զաւակունքս ,  
Կը թափառին օտար յաշխարհ .  
Ես ուր դիմեմ , ուր փնտրուեմ ,  
Կը ծառայեմ այլոց խոնարհ :

Եկա՛յք որդեակը իմ ,  
Զեր մօրն այցելութեան :

Դարեր անցան լուր մը չառի ,  
Իմ քաջերս մեռան կորան .  
Կ'ուլամ , արիւնըս կը սառի . . .  
Մէկը չունիմ տայ ինձ դարման :

Եկա՛յք որդեակը , և այլ :

Արիւնս ցամքած , սիրտըս մաշած ,  
Դէմքս է տըխուր մինչ յաւիտեան ,  
Եւ կարօտոյն իմ որդեկաց ,  
Պիտի իշնեմ սև գերեզման :

Եկա՛յք որդեակը , և այլն :

Եւ դու հովիւ թափառական ,  
Կ'երգես տիսուր 'ի մէջ հովտաց .  
Ե՛կ , արտասուենք թանգ կորըստեան ,  
Տըխուր մահուան մեր որդեկաց :

Եկա՛յք որդեակը , և այլն :

Իսկ դու կուռնկ իմ չայլենեաց ,  
Գնա՛ հեռու աշքէս 'ի բաց . . .  
Յետին ողջոյնս տար զաւակացս ,  
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած :

Եկա՛յք որդեակը , և այլն :

Վ Ր Է Ժ Ք

Բա՛մբ . որոտան բարձուստ բոմբիւնք յԱյրարատեան դաշտն  
ի վալր՝

Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրազդի՛  
Հրաւէր հայրենեաց հրաչակի ընդ հանուր,  
Հողիք Հայկաղանց բորբոքին ի հուր .  
Որք երկնաւորին պասկին էք կարօտ ,  
Որք երկնաւորին փառաց երկնայորդ ,  
Հապ'օն , արի արանց մանկունք ,  
Հայրենավրէժքըդ Հայկաղունք ;  
Հապ'օն , ի զէն գունդագունդ ,  
Յեռեալ ի պար թունդ ի թունդ .  
Ի զէն ի վրէժ , օն անդր յառաջ ,  
Ի զէն ի վրէժ , մի ձախ , մի յաջ ,  
Օն անդր յառաջ  
Մի ձախ մի յաջ  
Օն անդր յառաջ  
Յառաջ յառաջ ,  
Հապ'օն յառաջ :

Հայկեան փանդռանց որոտընդոստ դռնչին բարբառէ  
մարտագոռ ,  
Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն ի շեփոր՝  
Շարժեն հրեշտակք թեւըս լուսափողփողս ,  
Ճիւաղք ճուճաղաց կայտուն ի դքժոխս .  
Շոխնդըն շանթառաք զեթերօք փարի ,  
Սարսափին սանդարք ի խոլ խաւարի :  
Հապ'օն , արի արանց մանկունք , ևն :

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշն յայերս դոգ ծալ ի ծալ՝

հ ճակատուց ի թընամեաց սա ո՛չ գիտաց յուրաստ կալ ,  
Հեծեալ հրանժոյդ վեհին Վահանայ՝  
Վրէժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ .  
Փոընչեալ բոցաշունչ դափիր ի դարշապար .  
Ուազմամուտ վարդի յանժոյժ երիվար :  
Հապ'օն , արի արանց մանկունք , ևն :

ի գուպարել մարտայարդար գարշապարաց Արամայ ,  
Դոռան Կորդրիք , Մասիք սալսին , հոընչեն սահանք  
Երասիսայ .  
Ի գրոն ի գրոն տալ բիւրուցն ոտնատրոփի ,  
Տատանին դաշնակք՝ յառնէ շոխնդն ապշոպ  
Կոռուփ առ կոռուփ կոփին կրմբայք տէգ առտէգ ,  
Դղորդ առնուն տարերիք՝ կորովեացն ի վէտ :  
Հապ'օն , արի արանց մանկունք , ևն ,

Արի՛ք ի կոիւ քաջակորովքդ ընդ կորակոր հրոսն Արեաց .  
Հապա համհարզք մեր բիւրայալթք ձեզ նոր հանդէսք  
Են փառաց .

Թոմիք ի ուազմ կ խազմ , առէք զէն և զարդ ,  
Երեմնիւք յընիւք հարուլ բիւրս հազարս .  
Ի սուր ի սուսեր , կարչնեղ յագեզունս՝  
Ըզսեաւ Սասանեանց ջարդել կառափունս .  
Հապ'օն , արի արանց մանկունք , ևն :

Պինչև ցե՞րբ ցե՞րբ սուգ ունի զՀայս , հատէք զարտօսր ,  
որբք այրիք ,  
Հարանց՝ հարսանց՝ եղբարց՝ որդւոց , հանուրց Հայոց  
վրէժխընդիրք ,  
Թինդս առեալ երթամք յասպարէց քաջաց ,  
Ցուշիկ հընչեն ձայնք արեան սիրելեաց .  
Սոսափիւնք յերկնից՝ արհաւիրք յերկրէ  
Քաջացս օժանդակ՝ ըզՊարս հերքեսէ ,  
Հապ'օն , արի արանց մանկունք , ևն :

Օ՞ն անդր ի բաց Հայկեան հողոյ հըսկայազանց և սըրբոց,  
ի բաց ջոլիք չուառական մոխրապաշտիցըն պըղծոց,  
Դաշտք մեր մերժեացեն զոսկրոտին անգամ,  
Արիւնք վըկայից զճապաղիսն անժամ.  
Ուն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փախուստն  
Մատնակուրծք ընդ Հայս հայեացին հեռուստ  
Հապ'օն, արի արանց մանկունք, ևն:

Արք աղեղանց, բարձր ի թիրախ թռուսջիք՝ վերջին  
ձեղ իրախոյս,  
Առեալ տարցուք զանթիկնաղարձ զայս վարդագոյն դրու  
անխոյս,  
ի վերայ յիսնից յաղթից վարդանայ,  
Պարսկական բազկաւ արւոյն վահանայ,  
Շեշտ ի ծայր շիրմի դաշտին Շաւարշան  
Տընկել յաղթանակ անմահ Հայութեան.  
Հապ'օն, արի արանց մանկունք, ևն:

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԵՅՆ

### ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ Հայրենիք զիս կը կանչէ,  
Հեռու եմ Հայաստանէն.  
Հայու որդւոյն կը վայելէ  
Հեռանալ Հայաստանէն:

Միթէ արծաթ ոսկի գոհար,  
Կըսիոփէ Հայաստանը.  
Այս որ կողըայ որդւոց համար,  
Խղճալի Հայաստանը:

Խոր տըխրութեան մէջ է թաղուեր  
թագուհի Հայաստանը.  
Բոպիկ ոտքով արձակ մաղով  
Կ'արտասուէ Հայաստանը:

Անգութ երկինք ալ չը յիշեր,  
Մոռցեր է Հայաստանը.  
Անսիրտ Հայերն ալ չեն սիրեր  
Անուշէկ Հայաստանը:

Ո՞ս թողէք զիս խօսիմ աղաս,  
Երգեմ միշտ Հայաստանը.  
Անուշ երկիր կոյս անարատ,  
Աննըման Հայաստանը:

Արև ծածկեր է իւր դէմքը,  
Խաւար է Հայաստանը:  
Հայոց արևն ալ մարեր է,  
Սև հագեր Հայաստանը:

Թըշուառ սըրտիս ձայն կը կըարէ,  
Ողբալով Հայաստանը.  
Ո՞ս չիկայ Հայ, որ ըսփոփէ,  
Նուաղեալ Հայաստանը:

Թէ և կըտրի իմ վերջին շունչս,  
Պիտի պուամ Հայաստան.  
Պըլուիմ մէյ մ'իմ Հայրենեացս,  
Հապա մըտնեմ գերեզման:

Անդորրութիւն ես կը խնդրեմ,  
Սիրելի Հայաստանին.  
Կըտրիլ այս ձայնս չէ՛ չէ՛ կարող,  
Սոսկումըն գերեզմանին:  
Ա. ՀԱՅԿՈՒՆԻ

## ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեր՝  
Թէ երգք թռչն սիրողաբար,  
Մատունք կուսին ամենագեղ,  
Թէ որ զարնեն փափուկ քընար,  
Զունին ձայն մի այնքան սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,  
Որ մըրըկաւ էինք զատուած。  
Բաղդին ամէն ով չար ու նենդ  
Ի մի համբոյր ցըրուին ի բաց:  
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեոր Մայր Հայաստան,  
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,  
Մըրտին խորունկ վէրքըն դաժան,  
Բաղցը արտասուաց բուժին ցօղով:  
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ լացինք մենք ի հընում,  
Եկէք, դարձեալ յար անբաժան  
Խառնենք զարտօսր և ըզիսնդում,  
Որ բաղմածնունդ ըլլայ մէր ջան:  
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ յոդինք, մէկտեղ ցանենք,  
Մէկտեղ թափին մեր քըրտինքներ.

## ՇԱՐԺՈՒՄ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՍԻՐՈՅ

Զայն մը հնչեց երգումի Հայոց լեռներէն,  
Թունդ թունդ ելան Հայոց սրտեր զէնքի շաշիւնէն:  
Հայ գիւղացին դարուց ի վեր զէնք, սուր չէր տեսած,  
Դաշտը թողուց, սուր, հրացան բահի տեղ առած:  
Հայ ծերուկը ցուպն ի ձեռին լալով խնդրում է,  
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ:  
Հայ տիկինը սախուում է ամուսնոյն գնալ:  
Պատերազմի դաշտին վըրայ վէրք տալ՝ ըստանալ:  
Քընքուշ կեանքը ծանր է թըրում Հայ օրիորդին,  
Զէն ի ձեռին սիրտ է տալիս հայոց քաջերին:  
Երիտասարդք թոթով լեզուով նամակ ցրուել են,  
Արարատայ դաշտին վըրայ զինուոր խըմբել են:  
Ալ բաւ լացիր, Մայր Հայաստան, երկրըդ փառաց,  
Քու զինուորներդ միշտ կտրիմ են, որչափ ալ քաղցած:  
Առ ու գգուէ այդ քաջերը քու սըրտիդ վրայ,  
Որք կը թափին իւրեանց արին սուրբ հողիդ վրայ:  
Անմիտութիւն, տունը քանդող Հայոց խեղճ ազգին,  
Հրաժարեցաւ, տեղի տուաւ միութեան ձայնին: ◊  
Լըսեց Քիւրտն ու սառեցաւ արիւնը խեղճին.  
Չէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին:  
Ցընծա՛, Մայր մեր, ով Հայաստան, որդիքդ միացան՝  
Ութը տարրուան սուգ ու թախիծ մեզից վերացան:  
Ուրախացաւ Մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,  
Հինգ դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ:

Ըգհունձք բարեաց յերկինս հանենք,  
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր :  
Ինդ աստեղօք ինչ կայ սիրուն ,  
Քան զանձկայի եղբայր անուն :

## Ա. ՊԵՏԻԿԹԱՆԻ ԵԱՆ

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽԻՍ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,  
Դու գարնան միլուն թըռչնակ,  
Դէպի ուր ինձ ասա՛,  
թըռչում ես այսպէս արագ :

ԱՌԱ, ԹԸՐԱԿԻՐ, ՏԻԴԵԿՈՆՆԱԿ, ՄԸՆՆԱՃ ՄԵՂԸՐԱ ԱՀՄԱՐԱԿ, ԱՄՆԴ ՀԲԻՆԻՐ ՔՌ ԲՊԾՆԸՐ, ՀԱՅՐԵՆԻ ԿԸՐՈՒՌԻ ՄԱԿ :

Անդ հեռու ալեր  
Հայր մ'ունիմ սրգաւոր,  
Որ միակ իւր որդւոյն  
Սպասում է օրէ օր :

Երբ տեմնես դու նորա,  
Ինձնից շատ բարեւ արա՛,  
Ասա՛, թող նըստի լայ,  
Իւր անբաղդ որդւոյն վրայ :

Դու պատմէ, թէ ինչպէս  
Աստ անտէր ու խեղջ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով՝  
Կհանքս մաշուել, եղել է կէս :

ինձ համար ցերեկը՝  
Մութ է շրջնում արեգը.  
Գիշեր թաց աշքիս՝  
Քունք մօտ չէ գալիս:

Ասիր, որ չի բացուած  
թառամեցայ միացած.  
Ես ծաղկի գեղեցիկ,  
Հայրենի հողից զբրկած:

Դէս, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացի՛ր, թըսի՛ր արագ,  
Դէս՝ Հայոց երկիրը,  
Ծընած տեղս — Աշտարակ:

Գ. Ա. ԴՐԻԽԵՍԱՆ

## ԱՐԱՐԱՏԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Սրբաքսի ափերով՝  
Քայլամոլոր գնում եմ.  
Հին հին դարուց իշխասակ՝  
Ալեաց մէջը պըտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղեղուկ,  
Պըդասոր ըլըռով եղեղքին.  
Դարիւ դարիւ խիելով,  
Փախչում էին լալագին:

«— Արա՛ քս՝ ինչո՞ւ ծըկանց հետ,  
Պար չես բանում մանկական .  
Դու դեռ ծովը չը հասած ,  
Սրգաւոր ես ինձ նման :

«Ինչու արցունք ցայտում են,  
Քու սէգ հըպարտ աչերից .  
Ինչու արագ փախչում ես,  
Այդ հարազար ափերից :

«Մի՛ պըղտառել յատակըդ ,  
Հանդարտ հոսէ խայտալով .  
Մանկութիւնը քու կարծ է ,  
Շուտ կը համիս դէպ ՚ի ծով :

«Վարդի թըփիր թո՛ղ բուսնին ,  
Քու հիւրնկալ ափի մօտ .  
Սոխակները նոցա մէջ ,  
Երգեն մինչև առաւօտ :

«Մշտադալար ուսիներ ,  
Սառ ծոցի մէջ քու ջրին .  
Ճըկուն ոսարն ու տերեւ ,  
Թո՛ղ թաց անեն տապ օրին :

«Ափերիդ մօտ երգելու .  
Հովիւք թո՛ղ գան համարձակ .  
Գառն ու ուլը քու վըճիտ ,  
Զուրը մըտնեն միշտ արձակ ;»

Մէջքը ուոցուց Արաքսը ,  
Փրփուր հանեց իւր տակից .  
Ամպի նման գոռալով ,  
Էսպէս խօսեց յատակից :

«— Խիզա՛խ , անմի՛տ պատանի ,  
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր .  
Վըրդովում ես , նորոգում ,  
Իմ ցաւերը բիւրաւոր :

«Սիրելիի մահից յետ ,  
Ե՞րբ ես տեսել , որ այրին ,  
Ոտից ց'զլուկ պըճնուի ,  
Իւր զարդերով թանկագին :

«Որի՞ համար զարդարուիմ ,  
Որի՞ աչքը հրապուրեմ .  
Շատերն՝ ինձ են ատելի ,  
Շատերին՝ ես օտար եմ :

«Իմ ազգակիր գիտ Քուոը ,  
Թէե այրի ինձ նըման .  
Հսորկօրէն տանում է ,  
Գաղթակղիչի կուռ շղթան :

Բայց նա ինձ չէ օրինակ ,  
Ես Հայ՝ Հայըս կը ճանչնամ .  
Օտար փեսայ չուզելով ,  
Եւ միշտ այրի կը մընամ :

Կա՛ր ժամանակ , որ ես էլ ,  
Ճքեղաղարդ հարսի պէս .  
Հազար ու բիւր պէրանքով ,  
Փախչում էի ափերէս :

Յատակս պարզ ու վճիտ .  
Կոհակներս ոլորուն :  
Լուսաբերը մինչև ցայդ ,  
Ջրիս միջին էր լողում :

Ինչս մնաց այն օրից ,  
Ո՞ր ջրամօտ գեղերս .  
Ո՞րը իմ՝ շէն քաղաքից ,  
Ո՞ր բերկրալի տեղերս :

Տուրքը ջրի ամէն օր,  
իր սուրբ ծոցէն Արարատ.  
Մայրախընամ ինձ մնունդ,  
Պարգևում է լիառատ :

Բայց ես այն սուրբ ջրերով,  
Սուրբ Ակորի աղբիւրին.  
Պիտի ցօղեամ արտօրայքն,  
իմ առելի օտարին :

Կամ կենսատու իմ ջրով,  
Ափերիս մօտ կըկըզած.  
Իր ձեռքերը լուանայ  
Գող, աւազակը հոտած :

Մինչ իմ որդիք — ով գիտէ —,  
Ծարաւ, նօթի, անստէրունչ.  
Օտար աշխարհ յածում են,  
Թոյլ ոտքերով կիսաշունչ . . . :

Հեռո՛ւ հեռո՛ւ քշեցին,  
Բնիկ ազգը իմ Հայկեան.  
Նոցա տեղը ինձ տուին,  
Անգութ խուժանըն Պարսկական :

Դոցա՞ համար զարդարեմ,  
իմ հիւրնեալ ափերը .  
Եւ կամ դոցա՞ հրապուրեմ,  
Ճպուտ, պլածած աչերը :

Քանի որ իմ զաւակունք,  
Էսպէս կու մընան պանդուխտ .  
Զիս միշտ սպաւոր կը տեսնէք,  
Այս է անխար իմ սուրբ ուխտ) . . . :

Էլ չխօսեց Արաքուը,  
Յորձանք սուեց ահագին.  
Օղակ օղակ օձի պէս,  
Առաջ սուղաց մոլեղին :

ՔԱՐԱՐՈՒ-ՔԱՐՈՒՂԱՅ

### ԵՐԳ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ազատութեան սիրոյն համար շատ արիւններ թափուեցան,  
Անմեղ հայրեր ու զաւակներ եկան այսաեղ թաղուեցան :  
(ՔԻՆԵ)

Ահա եղբարք ես ալ կերթամ Ազգիս համար միանելու,  
Ազատութեան սիրոյն համար ամբողջ կեանքը դոհելու :  
Գերեզմանիս հողին վրայ թափէ արցունք հայր և մայր,  
Սփռէ ծաղիկ բուրումնաւէս նահատակ եմ ես յաւէտ :

Ահա այսօր Հայ եղբայրներ կուգան այսաեղ ողբալու:  
Նահատակաց հողին վրայ աղի արցունք թափելու :

Ո՛վ եղբայրներ դուք ալ ելեք գերեզմանին խորերէն,  
Ուրախացէք և ցնծացէք Ազատութեան գոչերէն :

Մ Ա. Պ. Թ. Ա. Ն. Ք.

Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան,  
Եւ արժանի անոնց հոգին Երկնից Սուրբ արքայու-  
թեան :

ԳՐԻԳՈՐ ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

ԱՌ ՀՆՉԱԿ

Հեռաւոր երկիր նըստած դու նժղեհ  
 Հայրենեաց բաղդին մօտուստ ես տեղեակ  
 Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ  
 Յեղափոխութեան ձայնատու Հնչակ :

Նոր գաղափարի քո ցանած սերման  
 Ազնիւ պտուղներն հասուննան արագ  
 Կարին և Պոլիս որուման նման  
 Անդրանիկ շարժմունք ծնան քեւ, Հնչակ :

Զար բռնութիւնը՝ Հայոց կեղեքիչ  
 Վախէն պահուեցաւ ոսկի գահին տակ  
 Խուլ Եւրոպայի թնդաց մէն դահլիճ  
 Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ :

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա  
 Հասած կարմըրին արեան նմանակ  
 Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ  
 Կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հնչակ :

Կոչնակդ հնչեցուր, հնչեցուր արագ  
 Թո՛ղ Հայք ուրք ելնեն ծաղէ մինչեւ ծագ  
 Փշրի ծանր շղթայն, ծագէ նոր արեգ  
 «Ազատ ենք» հնչէ, ոսկեղօծ Հնչակ :

ՊԵՐՃ ՄՈՒՇԼՈՒ

ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին դռներն յուսոյ,  
 Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ.  
 Զքնալ երկիրս մեր Սրմենիոյ.  
 Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր,  
 Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,  
 Երբոր ծառելն հագնին տերեւ.  
 Ցանկամ տեսնել զիմ կիլիկիա,  
 Աշխարհ որ էնձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Ալիրիոյ,  
 Լեառն լիրանան և իւր մայրեր.  
 Տեսի զերկիրն իտալիոյ,  
 Վենետիկ և իւր կոնտոներ.  
 Կղզի նման չիք մեր կիպրեայ,  
 Եւ ոչ մէկ վայր է արդարեւ.  
 Ցանկամ տեսնել զիմ կիլիկիա,  
 Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,  
 Ուր ամենայն իղձ կ'աւարտի.  
 Հասակ մը ուր հէզին ի տենչ,  
 Ցիշատակաց իւր կարօտի.  
 Ցորժամ քնարս իմ ցըրտանայ,  
 Սիրոյն տալով վերջին բարեւս.  
 Երթամ նընջել չիմ կիլիկիա,  
 Աշխարհ որ ինձ ետուր արեւ:  
 Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

### ԳԱՐՈՒՆ

Ո՞հ, ի՞նչ անուշ և ի՞նչպէս զով,  
Առաւօտուց փըշես հովիկ .  
Մաղկանց վըրայ գուրգուրալով ,  
Եւ մագերուն կուսին փափկիկ .  
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց ,  
Գընա՛ անցիր սըրտէս ի բաց :

Ո՞հ, ի՞նչ աղու և սրտագին ,  
Ծառոց մէջէնս երդես թըռոչնիկ .  
Սիրոյ ժամերն ի յանտառին ,  
Էղմայլեցան ի քո ձայնիկ .  
Բայց չես թըռոչնիկ իմ Հայրենեաց ,  
Գնա՛ թռի՛ր սըրտէս ի բաց :

Ո՞հ ի՞նչ մըմսւնջ հանես վըտակ .  
Ականուկիտ և հանգարափիկ .  
Քու հայելոյդ մէջ անապակ .  
Նային զիրենք վարդն ու աղջիկ .  
Բայց չես վըտակ իմ Հայրենեաց ,  
Գնա հոսէ՛ սըրտէս ի բաց :

Թէոլէտ թըռչնիկն և Հովն Հայոց ,  
Աւերակաց թըռչնն վերայ .  
Թէոլէտ պըրտոր վտակն Հայոց ,  
Նոծիներու մէջ կը սողայ .  
Նոքա՞ հառաչք են հայրենեաց ,  
Նոքա չերթա՞ն սըրտէս ի բաց :

Մ. Պէտիկթ-ԱՇԼԵԱՆ

### ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՐԴ

Դաշնակցական խումբ գնանք մինք Սասուն ,  
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում .  
Անդրանիկը քաջ իւր ընկերներով ,  
Կուզէ պատերազմ՝, կ'սպասէ գարնան :

Մօտ է գարունը , շուտով կը բացուի ,  
Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի ,  
Հայերը անվախ հոգւով միացած ,  
Հրացան ամբողջ ոտքի են կանգնած ,

Խմբապետները հոգւով են երդուած .  
Ֆէղայի ուժով գնում են առաջ .  
Առաջ է կանգնած Անդրանիկը քաջ ,  
Գոռում է գոչում , կ'ուզէ պատերազմ :

Հերիք եղբայրներ մինք շատ քննիցինք ,  
Բաւական չէ մեզ այսքան համբերենք ,  
Մայր Հայաստանը ձեռքից հանեցինք ,  
Հիմայ ուժ ունինք դարձեալ ետ կ'առնենք :

§

Հայր եղբայրներ թէ կունքի գանք ,  
Արեան դաշտը մենք նետուինք ,  
Սուրը ձեռին հուրը կուրծքին ,  
Սառած սրտեր բորբոքենք :  
Արեւելքից լոյս է ծագում  
Եւ Հայաստանի ուժին ցնցում , օ՞ն ,  
Օ՞ն յառաջ օ՞ն մարտ  
Օ՞ն ի հրազդայր մեր արիւնով մեր արիւնով

Ճամբայ բանանք Հայ եղբարք, ճան եղբարք  
Թշնամու դէմ մենք սլանանք,  
Հեղեղի պէս փոթորկի պէս լուայ արիւնով  
Ներկեր ներկենք պիով դիակով դաշտեր պա-  
տենք.  
Թող գնդակի տարափ թափի  
Թող մեզ մահը անարդ լափի  
Թշնամուն դէմ մենք սլանանք  
Հեղեղի պէս փոթորկի պէս  
Լուայ արիւնով ներկեր ներկենք  
Պիով դիակով դաշտեր պատենք:  
Թող վերջապէս տեսնէ Վաթան  
Պարզուած դրօշը ազատութեան,  
Թող վերջապէս տեսնէ Վաթան  
Պարզուած դրօշը ազատութեան:

---

## ԵՐԳ ԱՒԱՐԱՅՐԻ

Կռուեցէք, տղերք, կռուեցէք քաջ քաջ  
Անվեհեր կանգնած թշնամւոյն առաջ,  
Ճանկալի է մեզ միշտ ազնիւ մահը  
Հեռու մեղանից սոսխին ահը.  
Յառաջ խիզախենք իբրև նահատակ,  
Ի զուր թող չանցնին մեղնից մէկ գնդակ,  
  
Ահա, քրդերը փախչին սարսափած,  
Ահա՛, դիակներ արեամբ շաղախուած.  
Կրակ տեղացէք անդադար կրակ,  
Փառք մեր զէնքերին առատ է գնդակ:  
Այս անդամին ալ ցոյց տանք թշնամւոյն  
Թէ ինչ է Հայու ոյժն ու քաջութիւն:

Մեղ տօնախմբեն մեր նախնի քաջեր,  
Մեղի կըսպասեն մեր հէգ եղբայրներ.  
Ազատ չը ծնանք, գէթ մեռնինք ազատ  
Մեր սիրան ու հոգին պահենք անարատ.  
Դէհ կռուէք աղղերք մինչև շոնչ վերջին  
Սրժանի լինել փառաց պսակին:

Մեռնինք յուսալով, մերն է ապագան,  
Մեռնինք, բայց կեցցէ, կեցցէ Հայաստան,  
Այսպէս յորդորեց և ինկաւ արին  
Թողով մեզ անուն յիշատակ բարին.  
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս,  
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս:

---

## ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԱՎՅ ԵՐԳ

«Մեր հայրենիք թըշուառ, անտէր,  
Մեր թըշնամեաց ոսնակոխ,  
Իւր որդիքը արդ կանչում է  
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ:

«Մեր հայրենիք լըզթաներով  
Այսքան տարի կապկապած,  
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով  
Պիտի լինի ազատուած:

«Ահա՛, եղբայր, քեզ մի դըրօ՛  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղայ,  
Արտասուքով լուացի:

«Նայի՛ր նորան, երեք գունով՝  
Նուիրական մեր նըշան  
Թռ' զ փողփողի թըշնամւոյն դէմ,  
Թռ' զ կործանուի սէգ հըսկան :

«Խնչքան կին մարդ, մի թոյլ էակ,  
Պատերազմի գործերում  
Կարէ օգնել իւր եղբօրը,  
Զանց չարեցի քո սիրուն :

«Ահա՛ իմ գործ, ահա՛ գըրօշ,  
Շուտ ձի հնծի՛ր քաջի պէս,  
Գընա՛ փըրկել մեր հայրենիք,  
Պատերազմի վառ հանդէս :

«Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդը մի անգամ պիտ' մեռն,  
Բայց երանի՛, որ իւր ազգի  
Ազատութեան կը գոհուի :

«Գընա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,  
Ազգի սէրը քաջալեր,  
Գընա՛ թէեւ չեմ կարող գալ,  
Բայց իմ հոգին քեզ ընկեր :

«Գընա՛, մեռիր դու քաջի պէս,  
Թող չը տեսնէ թըշնամին  
Քու թիկունքը, թող նա չասէ  
Թէ վատ է իտալացին :»

Ասաց, տուեց օրիորդը  
Իւր եղբօրը մի գըրօշ,

Մետաքսից էր, ազնիւ գործած,  
Ուր երեք գոյն կար որոշ :

Եղբայրն առաւ և ողջունեց  
Իւր սիրական քընքուշ քոյր,  
Առաւ զէնքը, սուր, հըրացան,  
Հեծաւ իւր ձին սեւաթոյր .

«Քուրիկ, — կանչեց քաջ պատանին, —  
Մընաս բարեաւ, սիրական,  
Սյու դրօշակին պիտի նայի  
Ամբողջ բանակ իտալեան :

«Նա սուրբ է ինձ, երբ մըկոտուած  
Արտասուքով ու կընքած,  
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,  
Հայրենիքի նուիրուած :

«Թէ մեռանիմ, դու մի սըգար,  
Իմացի՛ր որ տարեցի  
Դէպ ի մահու արքայութիւն,  
Իմ հետ քանի թըշնամի :»

Ասաց, վազեց դէպ ի հանդէս  
Աւստրիացոց յանդիման,  
Իւր արիւնով զընել յաւերժ  
Ազատութիւն իտալեան :

Ո՛հ, իմ սիրաը կըտրատվում է  
Տեսանելով այսպէս սէր,  
Դէպ ի թըշուառ մի հայրենիք  
Որ սանակով եղած էր :

Սորա կէսը , կէսի կէսը ,  
Գէթ երեւէր մեր ազգում .  
Բայց մեր կանայք ... ո՞ւր , Եղիշէ ,  
Ո՞ւր մեր «Տիկնայք փափկասուն» :

Ո՞հ ... արտասուք ինձ խեղդում են :  
Ալ չեմ կարող բան խօսել .  
Զէ՛ ... թըշուառ չէ իտալիան ,  
Եթէ կանայք այսպէս են :

*Թարգմ. Մ. ՆԱԼԻՔԱՆԴԵԱՆԾ*

### ՉԱՅՆ ՏՈՒՐ

Զայն տուր , ո՞վ ծովակ ինչո՞ւ լռում ես ,  
Աղբակից լինել չկամիս դժբախտիս ,  
Շարժեցէք զեփիւռք ալիքը վէտ վէտ ,  
Խառնեցէք զարտասուս այս ջրերի հետ :

Հայաստանի մէջ անցքերին վըկայ ,  
Սկզբից մինչ այժմ , խնդրեմ , ինձ ասա ,  
Միթէ միշտ այսպէս պիտ' մնա՞յ Հայաստան ,  
Փշլից անապատ երբեմն բուրաստան :

Արդեօք գա՞լու է մի օր ժամանակ ,  
Մասիսի գլխուն տեսնել մի դրօշակ ,  
Եւ ամէն կողմից պանդուխտ ազգայինք ,  
Դիմն գէպ իւրեանց քաղցըր Հայրենիք :

*Ո.Ա.ՖՖԻ*

### ԶՈՆԵՐԳ ԻԶՄԻՐԼԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

Բարեաւ եկիր Հայր պատուական ,  
Մեր ամենուս Դու սիրական ,  
Ազգն անձկանոք Զեզ կըսպասէր ,  
Հովիւրդ քաջ և Ազգասէր .  
Կեաց Դու յաւէտ , կեաց անսասան  
Հայրենեաց զոհ Հայր Սրբազն :

Ազգը համայն ուրախ զուարթ ,  
Փա՛ռք Բարձրելոյն գոչէ և արդ .  
Որ պարզեւեց հէտ Հայ Ազգին ,  
Ազատութիւն չնորհ անգին .  
Կեաց Դու յաւէտ Հայր Իզմիրլեան  
Ազատութեան վեհ ախոյեան :

Հայ եղբայրներ գիտնանք յարդել ,  
Ազատութեան լոյն անարդել ,  
Որ մեզ տուաւ նոր կեանք , նոր յոյս ,  
Յառաջնորդել գէպ յանշէջ լոյս .  
Կեաց Դու յաւէտ Հայր Իզմիրլեան  
Ազատութեան քաջ ախոյեան :

Գորովագութ Սրբազն Տէր ,  
Կարօտըդ մեզ կը տոջորէր .  
Այլ արդ հրճուիմք մեք հոգեպէս ,  
Անձնանուէր հովուիդ ի տես .  
Մատջիմք առ Քեզ Հայր սիրալիր :  
Համբուրելով զԱղդ օրհնաձիր :

*Ա.Բ.Բ. ՔՀՆՅ. ԷՊԻԵԱՆ*

ՀԱՅՈՒՆԵՐ ԵՐԳԸ

Աղատութիւն, եկո՞ւր հոս .  
— Մեր փրկութեան հրեշտակ .  
Հին ռէժիմէն բարբարոս  
Ալ մի՛ թողուր յիշատակ :  
Սփոփանքի շուքըդ բեր,  
Քեզ կ'սպասենք անհամբեր .  
Բընակութեանդ ենք տեղեակ ,  
Հոգիներնիս քեզ դըղեակ :  
  
Աղատութիւն, քեզ տեսանք .  
Հայոց Ազգն ա՛լ ապահով՝  
Քեզ կը կարդայ գովասանք  
Հայրենաշոնչ բառերով :  
Կեանք, ինչք, պատիւ, արդար տուրք  
Քեզ կը պարտին Հայ և Թուրք:  
Բընակութեանդ ենք տեղեակ  
Մեր Թուրքիան քեզ դըղեակ :

Աղասութիւն քեզմով մենք  
Պիտի ապրինք երջանիկ .  
Ալ ուխտած ենք սէր մ'աննենդ  
Բոլոր Հայ , Թուրք պատանիք :  
Ասելութեան չունինք թոյն ,  
Մեր դաշնաքն է միութիւն :  
Բընակութեանդ ենք տեղեակ  
Խզմտանքիս քեզ գըզեակ :

ԹԵՂԴԻԿ

ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ

Մենք անկեղծ զինւոր ենք, առանց մի վիճակ,  
Ուխտել ենք ժառայել երկար ժամանակ,  
Պարսկաստանի խորքից եկել է նամակ .  
Գնում ենք բարով կուշանանք տարով,  
Արիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ  
Կապասեն մեղի

Դուշմանը մնդ տւառ «Ձան Փիդայ» անուն,  
Այդ անունն համաձայն, տեսաւ զօրութիւն,  
Մենք չենք ուզեր, ազատ եամաւ բանութիւն,  
Ուխտել ենք կռւել, այդ սիրով մեռնել,  
Համոզւած ենք որ, միայն այսպիսով կայ  
մեզ գրկութիւն:

Ստամպօլը պիտի լինի արեան ծով,  
Ամէն կողմէց կոփւ կ'սկսի շուտով,  
Աղբակից Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով,  
Աջից Վարդանը, ձախից Իշխանը,  
Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ,  
Քառք Դաշնակցութեան:

Բանկային գրաւում, Յոյնաց պատերազմ,  
Աւելի մեծ սարսափ տևեց գուշմանին .  
Քաջ զէլթունը ջարդեց վատ, չար գաղանին  
Կեցցէ Զէլթունը, խրոխա Սասունը,  
Դաշնակցութիւնը, Երջանիկ օրեր պարծանք  
Հայերուն:

## ԽԱՆԱՍՈՐԻ ՄԱՐՏԸ

Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը ,  
 Ֆիդային էր Դաշնակցական՝ վրէժ լուծում հովտումը :  
 Սոսկաց քիւրդը՝ քնաթաթախ Մարզկեցին ,  
 Զէր երազում ջնջւել իսպառ ֆիդայիցը լուսաբացին :  
 — Եաման , Աստւած , ֆիդան եկաւ ուր փախչենք .  
 Ասաց , որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին :  
 — Մի վախնար , հանգիստ կեցիր , բաջի ջան ,  
 Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժինդիր քաջ ֆիդան :  
 Մի ժամայ մէջ Մարզիկ ցեղը ջնջւեցաւ .  
 Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկւեցաւ :  
 Փչիր զեփիւռ , դէպ Առաւուլ մենք թռչինք ,  
 Դիրքեր բռնենք , գաթայ հալւայ ձիւնի ջրով ճաշակենք :  
 Մերթ կուռում է , մերթ բարձրանում քաջ ֆիդան ,  
 Եղակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան :  
 Զ'կար կարօն , տիսուր պատեց ամենքին ,  
 Երանի՛ է նրա հոգուն , որ զոհ դարձաւ այդ կուին :  
 Քեղ ենք յանձնում ով պաշտելի Առաւուլ ,  
 Կրծքիդ մէջը ամուր պահի անմահ զոհերն Հայերուն :  
 Հայե՛ր , յիշէք նուիրական այն օրը ,  
 Յուլիս ամսի քսանհինգին կատարեցէք մեր տօնը :

—•••••—

## Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

Եթէ միայն 5 կալօնի , 3 կալօնի և 8 կալօնի չափեր  
 ունիք և այս վերջինը գինիով լեցուն է , ի՞նչպէս կրնաք  
 անոնցմով ձիւդ 4 կալօն գինի չափել :

Պէտուին մը մեռնելով 17 ձի կը կտակէ իւր 3 տղա-  
 յոց . ամէնէն մեծին կը կտակէ ձիերուն կէսը , երկրո-  
 րին  $\frac{1}{3}$ ը , և ամէնէն փոքրին  $\frac{1}{9}$ ը : Ուստի վէճ մը կ'սկսի  
 թէ ի՞նչպէս պէտք է կտակը գործադրել , առանց ձիե-  
 րէն մին զոհելու , ուստի ի՞նչդիրը կը ներկայացնեն Տէր-  
 վիշ մը , որ իւր ձիերէն մին կուտայ որով 18 ձի ըլլա-  
 լով՝ 18ին կէսը կուտայ մէկ տղուն ,  $\frac{1}{3}$ ը միւսին և  $\frac{1}{9}$ ը  
 վերջինին և յետոյ իւր ձին ետ կ'առնէ դարձեալ :

2ը 5ով բաժնելով պէտք է արդիւնքը 1000 ըլլայ :

15 ոչխար 4 փարախի մէջ դնելու է , այնպէս որ իւ-  
 րաքանչիւրին մէջ միեւնոյն թիւը ըլլայ :

10 ճամբորդ պանդոկ մը կ'երթան և ամէն մէկը  
 սենեակ մը կ'ուզէ : Պանդոկապեսը կ'ըսէ որ միայն 9  
 սենեակ ունի , բայց կարծեմ թէ կ'ըսէ կրնամ այս կերպ  
 կարգադրել , և ճամբորդներէն մէկուն դառնալով կ'ըսէ  
 թէ , կը հաճիք սպասել մինչև որ ձեր միւս ընկերներուն  
 սենեակները տամ , յետոյ կ'ըսէ , կը վերադառնամ և ձեր  
 սենեակը կու տամ , այսպէս՝ 2րդ ճամբորդը Ա. սենեակը  
 կը դնէ , 3րդը Բրդ սենեակը , 4րդը Գրդ սենեակը , 5րդը  
 Դրդ սենեակը , 6րդը Երդ , 7րդը Զրդ , 8րդը Էրդ , 9րդը Ըրդ  
 և յետոյ կը դառնայ վերջին մարդուն որուն կուտայ 9րդ  
 սենեակը :

5 թիւեր կարգադրելու է (որոնց և ոչ մին 10էն ա-  
 ւելի պէտք է ըլլայ) այնպէս որ՝ երբոր ճախէն գէպի աջ  
 կարդացուին , աջ կողմի թիւը միւտ 10ին աւելի մօտ

պիտի ըլլայ քան թէ իւր նախորդը, և Ա. թիւը 10ին  
աւելի մօտ պիտի ըլլայ քան թէ 5րդը:

Տիկն մը աղամանդէ խաչ մը զրկեց գոհարավա-  
ճառին նորոգելու համար, խաչին վրայ վարէն վեր  
կամ վերէն վար համբելով 9 աղամանդներ կար. դարս  
ձեալ վարէն մինչև խաչին մէջի ծայրը հաշուելով 9 հատ  
էր: Գոհարավաճառը 2 հատը գողցաւ, բայց միեւնոյն  
կերպով հաշուելով դարձեալ աղամանդներուն թիւը 9  
էր: Ի՞նչ կերպ ըրած էր:

Այցելու մը բանտ մը այցելելով, բանտարկեալներէն  
միոյն ըստւ. «Եղբայրներ և քոյրեր չունիմ, սակայն այս  
մարդուն հայրը իմ հօրս տղան էր»: Բանտարկեալին հետ  
ի՞նչ ազգականութիւն ունէր:

Մարդ մը աղուէս մը, սագ մը, և քիչ մը ցորեն  
ունի որ կ'ուզէ գետէ մը մանցնել նաւակով մը, բայց ա-  
մէն անդամ անոնցմէ մէկ հատը միայն կրնայ դիմացի  
կողմը անցնել, և զանազան պատճառներով չկրնար աղ-  
ուէսը և սագը կամ սագը և ցորենը միասին ձգել, ի՞նչ-  
պէս պէտք է կարգադրէ:

Տղայ մը սհնեակ մը մտնելուն մէկը իրեն ըստւ.  
«Ճղա՛ս, կօշիկներս բեր»: Տղան պատասխանեց. «Ճիշդ  
է որ ես քու տղադ եօ, բայց դուն իմ հայրս չես, և  
մինչև որ չըսես թէ ի՞նչպէս կրնայ ըլլալ այս բանը՝ կօ-  
շիկներդ չեմ բերեր»:

10էն պակաս ու է թիւ առ, կրկնէ, և 4 աւելցուր  
վրան. յետոյ 5ով բազմապատկէ, վրան աւելցուր 12 և  
10ով բազմապատկէ, ինչ որ մնայ, անկից հանէ 320:  
Եթէ այս մեացորդին վերջին երկու թիւերը ջնջես, ինչ  
թիւ որ մնայ՝ առաջին ընտրած թիւը պիտի ըլլայ:

### ՇԱՅԱՐԸ ԻԲՐԵՒ ՀԱԿԱՆԵԽԱԿԱՆ

Բարիզի Բասթէուեան հաստատութենէն Բրօֆ. Թրիլ-  
պէո վերջերս գործնականապէս ցոյց տուաւ որ այրող  
շաքարը յառաջ կը բերէ տեսակ մը կազ acetyline-hyd-  
rogène formique կոչուած՝ որ ամենազօրաւոր հականե-  
խականներէն մին է:

Տասը քիլօ շաքար պարունակելու կարող ապակիէ  
ընդունարանի մը մէջ 5 կրամ շաքար այրեց: Եոգին պա-  
զելէ վերջ՝ ժանտատեսնդի, թոքախտի, հստախտի, ծալ-  
կախտի, և լն. բազեղները դրուեցան ընդունարանին մէջ,  
բաց ապակիէ խողովակներու մէջ, և տեսնուեցաւ որ  
կէս ժամուան մէջ ամբողջ միքրոպները մեռած էին:

Եթէ շաքարը այրէք գոցուած ամանի մը մէջ ուր  
հոտած միս կամ հոտած հաւկիթ դրած ըլլաք, իսկոյն  
իրենց գէջ հոտը կ'անյայտանայ, այսպէսով՝ այրած շա-  
քարին նկատմամբ ժողովրդեան ունեցած հաւաքը կ'ար-  
դարանայ:

### Ի՞ՆՉ Կ'ԱՐԺԵ ՕԴԱՉՈՒ ՄԵՔԵՆԱՅ ՄՀ

Ուիլպը Ռայթ որ վերջերս իւր թռելու մեքենա-  
յովը մեծ յաղթանակ մը տարաւ, իւր տաղանդովը մե-  
ծապէս օգնած է գծագրիչներուն իւր ծրագիրը ի գործ  
դնելու համար:

Սոյն կարեւոր գործին ամբողջութիւնը յանձնուած  
էր Բարիզի Վուազէն Եղբարց, որ օդաչու մեքենաներ  
պատրաստելու համար աշխարհիս ամէնէն մեծ գործա-  
րանը ունին:

Օդաչու մեքենայի մը ամէնէն սուզ մասը շարժիչ  
մեքենան է:

Վուազէն եղբարց աշխատանոցը լեցուն է խոշոր օդաչու մեքենաներով և տարօրինակ տեսարան մը կը ներկայացնէ, որ աւելի կը նմանի թանգարանի մը քան թէ աշխատանոցի մը: Բոլոր պէտք եղած մեքենաները և նիւթերը կը բաղկանան 1 սղոցէ, 1 քերիչէ, քանի մը տախտակներէ, քանի մը թուրերէ և մեծաքանակ մարմաշէ (մուսլին) և երկաթէ:

Տախտակները որ կամ հացենի (տիշ պուտաք աղածը) կամ մայրի (չամ աղածը) և կամ կաղամախի (գավագ աղածը) կ'ըլլան, գրեթէ 30 կամ 35 ոտք երկար են՝  $2-2\frac{1}{2}$  ինչէզ հաստութեամբ: Տախտակի այս շերտերէն չորաք՝ իրարու միացած՝ օդաչուին առանցքը կը կազմին, որ հաստատուած է անկիւնական երկաթի թերթերէ գոտիներով: Առանցքին վրայ նստարան մը կայ ճամբորդին համար և ուրիշ մ'ալ շարժիչին համար:

Գործիքին երկու կողմը թեւեր հաստատուած են, որոնք փայտի չորս շերտերէ չինուած են, երկաթ թելէ գոտիներով իրարու միացած: Իրաքանչիւր թեւ՝ մարմաշեայ երկու հորիզոնական օդաւալցներ (aéroplanes) ունի: Երբ ասոնք կատարեալ է, մեքենան պատրաստ է շարժիչին, մղիչին և զեկին համար: Մէկ շաբաթուան մէջ կարելի է օդաչու մը չինել:

Օդաչու մը կ'արժէ 900—1100 ոսկի, այս գումարին կէալ շարժիչին համար է: Սղութեան պատճառը արհեստին նորութիւնը և յանձնարարութեանց նուազութիւնն է: Կը յուսանք որ հետզհետէ գիները աւելի պիտի աժաննան և մինչեւ 100 ոսկիի պիտի իջնէ որպէս զի Շտեմարանի ընթերցողները կարողանան իրենց յատուկ օդաչու գործիքը ունենալ և ուզած ժամանակնին զբասական օդային պտոյտներ կատարել:

### ԽՕՍՈՂ ԺԱՄԱՅՈՑՑՆԵՐ

Զուիցերիոյ մէջ մօտերս սկսած են տեսակ մը նորահար ժամացոյցներ շինել, որոնք երես կամ ոլաք չունին: Այլ երբ վրայի կոճակին կը կոխէք՝ ձայնագրական ներքին կարգադրութեամբ մը կը պոռայ «Հինգ ու կէս» կամ «Տասնին քսան կայ», և լն. ժամուն համեմատ:

### ԵՐԱԾԻՇՏ ԶՈՒԿԵՐԸ

Սէլլանի Պաթիքալօս լիճին մէջ տեսակ մը ձուկեր կան որոնք երաժշտ ձուկեր կը կոչուին, և մինչեւ հիմակ գտնուած կամ տեսնուած ձուկերուն մէջ միակ տեսակն են՝ որ երաժշտական այս նշանաւոր յատկութիւնը ունին: Կ'ըսուփ թէ ասոնց հանած ձայնը այնքան անոց և ներդաշնակ է որ տաւիղի ձայնի կը նմանի:

### ՆԻՀԱՐՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Նիհարնալու համար տեսակ տեսակ գաղտնի դեղեր ծանուցուած են մինչեւ ցարդ հոգնեցուցիչ մարմնամարզ ներ և պահեցողութիւն յանձնարարելով, ամէնքն ալ գործուած են և տեսնուած է որ բան մը չին արժեր: Հոս յայտնի կերպով կը հրատարակենք անվաս դեղ մը Հոս յայտնի կերպով կը հրատարակենք անվաս դեղ մը Հոս յայտնի արդիւնք ցոյց տուած է մինչեւ ցարդ: Որ սքանչելի արդիւնք ցոյց տուած է մինչեւ ցարդ: Մորմոլա 30 gr.  
Ext. fluide Glycyrrhiza 30 gr.  
Glycérine pure 30 gr.  
Eau de menthe 100 gr.

Այս ախորժելի բաղադրութենէն պէտք է երկու արծաթ թքալ առնել ամէն կերակուրէ վերջ և պառկելու ժամանակ : Քիչ ժամանակի մէջ պիտի զարմացմաք տեսնէք որ այս սքանչելի ընտանեկան դեղովը ծանրութիւննիդ պիտի նուազի : Ուկ է մարմնամարզ կամ պահեցողութիւն ընելսւ պէտք չունիք, ոչ ալ ձեր սովորական կեանքէն տարբեր կեանք մը վարելու պէտք ունիք : Այս բաղադրութիւնը շատ առողջարար է մարմնոյ համար, արիւնը կը մաքրէ, արեան շրջանը կը կանոնաւորէ և երեսի խորշոմներու կազմուիլը կ'արգիւէ :

### ԶԵՐՄԱՉԱՓՆԵՐ

Ֆարենհայր, Սանրիկրատ եւ Թէիւմիւր

Հետագայ ցուցակը ցոյց կուտայ սոյն երեք ջերմաշավմներու աստիճանները զանազան բարեխսառնութեանց միջոցին :

Ֆարէնհայթի աստիճանները՝ Սանթիկրատի վերածելու համար պէտք է 32 հանել, մնացորդը 5ով բազմապատկել և 9ով բաժնել :

Սանթիկրատը՝ Ֆարէնհայթի վերածելու համար պէտք է 9ով բազմապատկել 5ով բաժնել և 32 աւելցնել :

Ֆարէնհայթը՝ Թէիւմիւրի վերածելու համար պէտք է 32 գեղչել 4ով բազմապատկել և 9ով բաժնել :

Թէիւմիւրը՝ Ֆարէնհայթի վերածելու համար պէտք է 9ով բազմապատկել, 4ով բաժնել և 32 աւելցնել :

Սառուցման կէտ (ջուրի) = 32° Ֆ. 0° Ս. և 0° Ռ.

Եռացման » = 212° Ֆ. 100° Ս. և 80° Ռ.

Ֆարէնհայթ Սանթիկրատ Թէիւմիւր

212 100 80

200 93.3 74.7

Ֆարէնհայթ	Սանթիկրատ	Թէիւմիւր
150	65.6	52.4
112	44.4	35.5
110	43.3	34.7
108	42.2	33.8
106	41.1	32.9
105	40.6	32.4
104	40	32
103	39.4	31.6
102	38.9	31.1
101.5	38.6	30.9
101	38.3	30.7
100.5	38.1	30.4
100	37.8	30.2
99.5	37.5	30
99	37.2	29.8
98.4 (մարմնոյ)	36.9	29.5
98 բարեխսառ-	36.7	29.3
97.5 (նութիւն)	36.4	29.1
97	36.1	28.9
96.5	35.8	28.7
96	35.6	28.4
95.5	35.3	28.2
95	35	28
94	34.4	27.6
92	33.3	26.7
90	32.2	25.8
88	31.1	24.9
86	30	24
84	28.9	23.1
82	27.8	22.2
80	26.7	21.3

Թարէնհայթ	Սանթիկրատ	Ուշւմիւր
78	25.6	20.4
76	24.4	19.6
74	23.3	18.7
72	22.2	17.8
70	21.1	16.9
68	20	16
66	18.9	15.1
64	17.8	14.2
62	16.7	13.3
60	15.6	12.4
58	14.4	11.6
56	13.3	10.7
54	12.2	9.8
52	11.1	8.9
32	0	0

### ՀԻՆԵՐՈՒՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Թաղէս՝ որ կոչուեցաւ Յունական փիլիսոփայութեան հայրը և աշխարհիս 7 իմաստուններուն ամենամեծը, ապրեցաւ 7րդ դարուն (Ն. Ք.): Իրեն վերագրուած ասացուածները շատ հետաքրքրական և շահեկան են երբ նոյն օրերը բաղդատութեան դնենք մեր օրերուն հետ:

Թաղէս փառք կուտար բաղդին երեք բանի համար. 1. Որ մարդ էր և ոչ կենդանի; 2. Որ մարդ ծնած էր և ոչ կին; 3. Որ Յոյն էր և ոչ բարբարոս:

Այն էր որ ըստաւ. «Ծանիր զքեզ»: «Քիչ խօսքերը խոհեմ դատողութեան նշաններ ինք»: «Իմաստութիւն փնտուէ, և ընտրէ ինչ որ ամէնէն արժանաւորն է, որ-

պէս զի չարախ աներուն և բանսարկուններուն բերանը գոցես»: «Աշխարհէս աւելի գեղեցիկ բան չկայ»: «Պէտքը ամէնէն զօրաւոր բանն է, որովհետև ամէն բանի կը յազթէ»: «Ժամանակը ամէնէն խելացի բանն է, որովհետև կը հնարէ և կը յայտնէ ամէն բան»: Երիտասարդութեան մէջ ստիպեցին զինքը որ ամուսնանայ, ըստ թէ շատ կանուխն է, երբ ժամանակ անցաւ և քիչ մը տարիքը առաւ դարձեալ առաջարկեցին, այն ժամանակ ալ ըստ թէ շատ ուշ է:

### ՄՆԵԴՈՑ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆԸ

Հետեւեւեալ ցուցակը կը ցուցնէ սովորական մնունդ-ներու մարսողութեան համար պէտք եղած ժամանակը:

Սնօւնդի տեսակը

Ժփած բրինձ	1	—
Զարնուած հաւկիթ	1	30
Թարմ տապկուած կարմրախայտ	1	30
Գարիէ ապուր	1	30
Չեփած քաղցր խնձոր	1	30
Կասկարայ եղած երէի միս	1	45
Եռացած նուրբ օսլայ	2	—
Եռացած թարփօքա	2	—
Եռացած կաթ	2	—
Կասկարայ եղած կովու լեարդ	2	—
Թարմ հում հաւկիթ	2	—
Թթու հում խնձոր	2	—
Հում կաղամբ	2	15
Հում կաթ	2	15
Տապկած հաւկիթ	2	15
Խորոված սագ	2	—

Սնունդի տեսակը	Ժամ	Վայրկեան
Խորոված հողկանաւ	2	30
Լաւ եփած կարկանդակ	2	30
Բակլայ, լուբիա, ևն.	2	30
Հում ոստրէ	2	55
Քիչ խաշած հաւկիթ	3	—
Կասկարայ եղած պիֆթէկ	3	—
Կասկարայ եղած ոչխարի միս	3	—
Խաշած ոչխարի միս	3	—
Վառեակի ապուր	3	—
Խոզի միս, եռացած	3	15
Խորոված ոչխարի միս	3	15
Հաց	3	15
Խաշած ստեպղին	3	15
Կասկարայ եղած երշիկ	3	20
Կարագ	3	30
Պանիր	3	30
Շոլդամ	3	30
Խաշած գետնախնձոր	3	30
Կարծր խաշած հաւկիթ	3	30
Խաշած ճակնդեղ	3	45
Խորոված հորթու միս	4	30
Եռացած կաղամբ	4	30

### ԿԵՆԴԱՆԵԱՅ ԿԵԱՆՔԻ ՏԵԽՈՂՈՒԹԻՒՆԸ

Միջատներէն ոմանք քանի մը ժամ միայն կ'ապրին, ուրիշներ քանի մը շաբաթ միայն: Դողոշը (գարագուր պաղը) 15 տարիի չափ կ'ապրի: Ծածան. — Պի. Փօն կ'ըսէ որ Մօրէբայի կոմսին աւագանին մէջ ծածան մը տեսած է որ 150 տարիէն աւելի առաջ հոն դրուած էր:

1497ին Հելպրունի մօտ լիճի մը մէջ բռնուած գալած ծուկ մը գտնուեցաւ, վրան պղնձէ օղակ մը անցուցած էին ժամանակին, որուն վրայի թուանշանէն հասկցուեցաւ որ 1230ին լիճը ձգած էին: Տան մէջ թռչունները հաւեղէնները ընդհանրապէս 12-15 տարեկան կ'ապրին: Թութակը և արագիլը 100ական տարի կ'ապրին: Ուղար 40 տարի կ'ապրի: Զին 30: Եղը 20: Շունը 12: Կատուն՝ 10: Ոչխարը՝ 9: Ճագարը՝ 8: Փիղը՝ 200-300: Կէտը՝ 400 տարի կ'ապրի:

### ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ

Բէթը Յարթան անուն Հունդարացի մը, 1539ին ծնելով 1724ին մեռած է, 185 տարի ապրելով: Թովմաս Բար անուամբ անդիլացի մը 169 տարեկան մեռած է Շրօշայրի մէջ, այդ տարիքին մէջ Կարողոս Ս. Ի. պատրոն հացկերոյթի մը գնաց և հոն շատ ուտելով մեռաւ: Լատր հացկերոյթի մը գնաց և հոն շատ ուտելով մեռաւ: Մեռնելէ վերջ բրոֆ. Հարվի դիազննութիւն կատարելով հաստատեց որ եթէ նոյն օրը այդ շատակերութեւնը ըրած կատարեց 1786 Օգոստ. 31ին, մեռաւ 1889 Ապրիլ 10ին կարճ հիւանդութենէ մը վերջ:

### ԿԵՆԴԱՆԵԱՅ ՅՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՅՑԸ

Մասկեր անանոց մէջ յլութեան ժամանակամիջոցը Մասկեր կարծ է քան թէ բուսակեր անանոց մէջ: Մասկերի կարծ է քան թէ բուսակեր անանոց մէջ: Մասկերներու ծագերը ծնած ժամանակին նուազ զարգացած կերներու ծագերը ծնած ժամանակին պատճի աչքերներն կը բացուի: Կըլան և քանի օրեր վերջը միայն աչքերներն կը բացուի: Բուսակեր կենդանիներէն Փիղը 20-21 ամիսէն կը ծնի:

Ընձուղար՝ 14 ամիսէն։ Ուղար՝ 12 ամիսէն։ Գոմէշը՝  
12 ամիսէն։ Էշը՝ 12 ամիսէն։ Զին՝ 11 ամիսը անցած։  
Ոնդեղիւրը՝ 9 ամիսէն։ Կովը՝ 9 ամիսէն։ Ոշխարը և  
այծը՝ 5 ամիսէն։ Խոզը՝ 4 ամիսէն։ Կրծող կենդանինե-  
ներէն կուղբը՝ 4 ամիսէն։ Առնէտը՝ 31 օրէն։ Ճագարը՝  
30-31 օրէն։ Միկոռ և մուկը՝ 28 օրէն։ Խոզը՝ 21 օրէն։  
Մսակեր կենդանիներէն Արջը՝ 6 ամիսէն։ Առիւծը՝ 108  
օրէն։ Կատուառիւծը՝ 72 օրէն։ Աղուէսը և գայլաշունը՝  
62-63 օրէն։ Կատուն՝ 55-56 օրէն։ Պարկաւոր կենդա-  
նիներէն Ագենազը՝ 39 օրէն։ Պարկերէն՝ 26 օրէն։ Կիտազ-  
գիներէն կէտը՝ 10 ամիսէն։ Կապիկը՝ 7 ամիսէն։ Զուա-  
ծիներէն՝ Սազը կը թխաէ 30 օրէն։ Կարապը՝ 42 օրէն։  
Հաւը՝ 21 օրէն։ Բաղը՝ 30 օրէն։ Հնդկահաւը՝ 28 օրէն։  
Դեղձանիկը՝ 14 օրէն։ Աղաւնին՝ 21 օրէն։ Թութակը՝  
40 օրէն։

---

### ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒԻ ԱՐԳԱՍԱՀՈՐՈՒԹԻՒՆԸ

Փիղը, ուղար և ձին հազիւ մէկ հատէ աւելի կը բե-  
րեն։ Առիւծը 1, յաճախ 2-3, երբեմն 5 կամ աւելի։  
Ընտանի ճագարին արգասաւորութիւնը հրաշալի է, 6  
ամսու ճագար մը կ'սկսի ճագ բերել և տարին 7 անգամ  
կը բերէ, ամէն մէկ անգամին 4-12 հատ, երբեմն ալ  
աւելի։ Հաշիւ եղած է որ զոյգ մը ճագարի սերունդը  
չորս տարուան մէջ 1  $\frac{1}{4}$  000000 կ'ըլլայ։ Աւստրալիոյ մէջ  
մացուած զոյգ մը ճագարը այն աստիճան շատցած է որ  
հիմա անոր ջնջմանը համար մասնաւոր օրէնք մը պատ-  
րաստուած է։

---

### ՏԱՆՏԻԿԻՆԵՐՈՒԻ ՀԱՄԱՐ

Մրջիւնները վանելու համար օշինդրի (բէլին օթը)  
ձիւղեր պէտք է զնել մրջիւն եղած տեղերը։

Միջատները շաքարի ամաններէն հեռու պահելու  
համար, պէտք է տուփին վրայ՝ եղերքին մօտ կաւճի-  
նշան ընել։

Կօշիկները ջուրէ անթափանց ընելու համար պէտք  
է հնդիկ իւղ քսել, եթէ չէք ուզեր որ քալած ժամա-  
նակնիդ ձայն հանէ՝ ներբանին մէջտեղը գամ մը գա-  
մեցէք։

Շիշերը դիւրաւ կը մաքրուին տաք ջուրով և ածու-  
խի փոշիով։

Ծինելոյզը եթէ բռնկի, ափ մը աղ կամ ծծումբ  
վառարանի մէջ նետեցէք։

Լամբարի շիշերը լաւ կը մաքրուին լրագիրով։

Լամբարը լեցուցած ժամանակնիդ քանի մը կաթիլ  
քարիւղ կաթեցուցէք լաթի մը վրայ, և անով մաքրե-  
ցէք լապակին մինչեւ որ լաւ մը մաքրուի։

Ճանճերը սենեակին մէջէն վանելու միջոցն է քսան  
կաթիլ ասիտ ֆէնսիք տաք ամանի մը վրայ լեցունել,  
որուն չոգին բաւական է ճանճերը վանելու։

Մժեղները վանելու համար՝ կաղինի լունծութեամբ  
քափուրի (քեափիրի) կտոր մը լամբարին լվրայ բռնելու  
է մինչեւ որ հատնի։

Կարասիները մաքրելու համար՝ նախ պէտք է լաւ  
մը շիշել կարասիները եռացած կտաւատի իւղի (պէղիր  
եաղի) մէջ թաթիսուած լաթով, յետոյ պէտք է չորցնել  
և չոր ֆանելայով մը շիշել, պէտք է հոգ տանիլ որ բո-  
լոր իւղը լաւ մաքրուած ըլլայ ափա թէ ոչ վրան շուտ  
փոշի կ'առնէ։

Ոսկեղօծ շրջանակները կը մաքրուին բեւեկնի իւղի  
(թիրեմենդի) մէջ թաթխուած սպունքով մը շրջանակ-  
ները սրբելով :

Իւղի բիծերը հանելու համար՝ բիծ եղած տեղը բե-  
ւեկնի իւղով թրջելու է և կերպասին տակն ու վրան  
ծծուն թուղթ մը դնելով վրան կտիսելու է, այսպէսով  
իւղը կը լուծուի և թուղթէն ծծուելով՝ կերպասին վրա-  
յէն բոլորովին անյայտ կ'ըլլայ :

Մաղերը շատ գեղեցիկ կերպով կը մաքրուին հե-  
տեւեալ բաղադրութեամբ լուալով, 1 օխա անուշ ջուր,  
3 տրամ սօտա և 2 տրամ քրեմ (քռըմ թառ-  
թառ) :

Երկաթի ժանգի բիծերը մուսուլինի կամ ձերմակե-  
զէններու վրայէն հանելու համար՝ պէտք է բիծը զըս-  
նուած տեղը լեմնի ջուրով և աղով թրջել և արեւին  
դնել, սովորաբար պէտք է մէկ երկու անգամ կրկնել  
այս բանը :

Մուշտակները և բրդեզէնները ցեցէ պաշտպանելու  
համար պէտք է լաւ մը թոթուել և փայտով զարնել,  
յետոյ թղթէ պարկի մէջ դնելով կախել, եթէ պարկին  
մէջ ցեց և ցեցի հաւկիթներ չիկան՝ մուշտակները ապա-  
հով են :

Ներկի բիծերը կարելի է քլօրօֆօրմով հանել, եր-  
բոր թթու մը՝ կերպասի մը գոյնը աւրած է, նախ պէտք  
է ամօնեաք քսել թթուն չէզոքացնելու համար, յետոյ  
երբ քլօրօֆօրմ քսուի կերպասը նախկին գոյնը կ'ստանայ :

Բլիւշի կամ թաւիչի պառկած խաւը շտկելու հա-  
մար՝ հակառակ կողմէն պէտք է պաղ ջուրով թրջել, և  
յետոյ տաք արդուկի մը բռնել, չորցնելէ վերջը պէտք  
է բլիւշը խողանակել :



**ԱՇԽԱՏԱՄԵՐԱՀՆԻ ԵՐԿԱՎԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

**Դիմ**

Պորքնական Բառարան Հայերեւէ Անգլիարէն 35 դր.

Չորեքեղական Խօսակցութիւն (Հայ.-Գուգ.

(Անգլ.-Գերմ.)

12 դր.

Ժամանակական Հայոց խաղեր

5 դր.

Յանդարան Խոյնարան և Խոյնածախ բառեր

4 դր.

Հահմարան Պրատեփ Գիտելեաց. Ա. Հասոպ

6 դր.

**ՀԵՅ ՄԱՍԻՆԸ**

Պատվիրազագ Անգլանակ Բառարան

Անգլիարէնէ Հայերէն

Webster համարակիցիքէն ամսուած

800 պատվիրազագ

1100 — 1200 էջ

ՀՀ Ազգային գրադարան



NL0147537

15-829